

ՄԱՍՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 48

4 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

01

Արմաւ եւ Իզմիր (Խմբագրական)
Կը սրբե՞ա զիս (Կրօնային Քերքուած)
Սիրուած Դեմքեր. «Նդիւք եպիսկ. Դուրեան»
«Քառասի»ին համար (Արձակ եւ ոճանաւոր)
«Արմաւի հոգին»
Մեք ամուսնութիւնները
Թորովումներ (Բանաստեղծութիւն)
Սանա Պեռնար (Թատերական Բրօնիկ)

Տ. Ա.

ԵՂԻՇԵ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ
ԶԻՅՅԷ-ՍԱՐԱՅ
ԱՂԵԲՍ. ՓԱՆՈՍԵԱՆ
ԼԵՆՈՆ. ՔԻՐԻՇՃԵԱՆ
ԵՆՈՎՔ. ԱՐՄԷՆ
ՎԱՀՐՈՒԺԱՆ
Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍՍԻՍ Շաբաթաբերքի սարեկան բաժանորդագրինն է Կ. Պոլսոյ համար Բաւսուն դրօ. եւ գաւառներուն համար յիսուն դրօ., կանխիկ վճարելի: Արտասահման 12 ֆրանք կամ 5 բուլլի: Թորասարական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առօրէ: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն Խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր: Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասչելի պայմաններով:

Զեռ-Քէ Կը ՇԱԽՈՒԻ ԼԱՏՐ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

در علیّه ده غلطه ده (ماسيس) غزته سی اداره سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍՍԻՍԻ

Կ. Պոլիս, Լալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ծարսնակահիթ

Թէլը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդաց գլխաւոր բնական դարձած է, ա՛յնքան բաղաժիւր տեսակներ ունի որ, արդարեւ գործածողներուն համար բաւական դժուար է լուր ընթրութիւն մը ընել: Այդ տեսակներէն մասնք նշանաւոր են իրր փոփոխանման եւ քաղցրաբոյր, մասնք ալ թէեւ նոյնքան փոփոխելի համառ հոտ չունին, գերազանց են սակայն իրր կաշուի զօրացուցիչ, վերջապէս իւրաքանչէր թէ, իր ուրոյն լաւութիւններն ունին որոնք գինքը կը դառնազանեն ուսիլ, տեսակներէ:



Սակայն կայ թէյ մը, որ այդ լաւութեանց ամէնէն կարեւորները կը միացնէ ի վրայ. այսինքն՝ գոյն, համա, հոտ եւ մանաւանդ կաշուի զօրացուցիչ անզուգական ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ճաբոնցի թէյը, որ այդ լաւութեան թահն չհաճիւ կը լարմարի ամէն տարիքի ու կազմութեան. ամէն կլիմայի եւ եղանակի եւ ամէն ճաշակի:

Յալբուրեան եւ իսագուրեան թէյի մեծ վաճառատունը, իր բազմաթիւ յաճախորդաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ մեծաքանակ ներածած է ճաբոնական դուա թէյ մասնաւոր եւ իսկական աւափերով ու կը հրաւիրէ օգտուիլ այս առիթէն բոլոր առնձը, որ կը փափաքին ունենալ թէյ մը:

Համով, հոսով, առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկական, չինական, Սէյլան եւ Ճապոնի մեծ նաւա տեսակ թէյեր:

6 - 10

Ուսադուրեան մարգայի

ՏՕՔԹ. ԲՕՐԹՈՒԳԱԼԻՍ

(Dr. Portucalis)

Նախկին ուսուցիչ Կ. Պոլսոյ Կայս. Բժշկական վարժարանին, անդամ Բարիդի Բժշկական համաժողովին:—Մասնագէտ արանց եւ կանանց ծննդական գործարան. ներու հիւանդութեանց:—Պատույ վկայագիր ունի Պէրլինի, Լանտեր, Բեյթայի եւ ուրիշ երկիրներու Ակադեմիաներէն:—Հնարիչ բժշկական գործիքներու եւ հեղինակի մասնագիտութեան վերաբերեալ գործերու:

Հիւանդ կ'ընդունի Պոլսոյ կազմը, կամուրջին դէմի անկիւնը, իր դարձանառան մէջ, ամէն օր կէսօրէն մինչեւ իրիկուն. Իսկ Բերա, Թաքսիմ, Ֆրանսա. կան հիւանդանոցին դէմ, ամէն օր առաւօտէն մինչեւ կէս օր եւ իրիկուն ժամ 6 էն 9 (Ը. Ե.)

1-10

ԳՈՐԾԱՐԱՆ

Գորգի մաքրութեան եւ նորոգութեան (Գրասենեակ՝ Մահմաւ-փաշա, Թարագճըլար, Մեծ Նոր Խանի կից, Թ. 37)

Այս հանրածառ զօրծարանին մէջ կը մաքրուին աղտոտած եւ փոշոտ թէ՛ մետաքսէ եւ թէ՛ բարդէ ամէն տեսակ ընտիր դորգեր, քիմիական դեղորէից միջոցաւ, առանց ո՛ր եւ է արտա կամ հետք ձգելու: Ընդհակառակը, բոլորովին նոր երեւոյթ մը կ'առնեն այս գործարանին մէջ մաքրուած գորգերը:

Ունի նաեւ առաւելութիւն մը նոր գորգերու վրայ, այն է թէ՛ այս գործարանին մէջ մաքրուած գորգերը գերծ կը մնան ցեցերու (կիւվէ) կեր ըլլալէ:

Կը նորոգուին նաեւ օրեւէ կերպով վնասուած գորգեր:

Սոյն գործարանը կը ստանձնէ նաեւ պարաստել նոր գորգեր, ինչ մեծութեամբ ու ճաշակով որ ուզուի:

Յանձնարարութիւնք պէտք է ուղարկ գրասենեակը:

Դիւրամասցելի պայմաններ:

9-10

CAISSE PATERNELLE

ՔԷՍ ԲԱԴԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1841 ԻՆ

ԿԸ ԴՈՐՄԵ ՖՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՅՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՈՒՆ ՏԱԿ

Սկիզբէն ի վեր ապահովագրեալներու եղած վնարում 300 միլիոն ֆր.
Սկիզբէն ի վեր արձանագրեալ ապահովագրութիւնք 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՑԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԻՔ ՖՐ. 85,000.000

ԴՐԱՄԱԳԼՈՒԻՒ ԵՒ ՊԱՀԵՍ 62,750.000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեան զաւարին վրայ պահեստի համեմատութիւնն է 74% օրով ՔԷՍ ԲԱԴԵՐՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գեր ի վեր ԿԸ հանդիսանալ արիւ ընկերութեանց ցայ տուած երաշխաւորութիւնէն:

Ընկերութեան վարչական խորհուրդը կազմուած է ֆրանսայի ամէնէն նշանաւոր գրաւորներէն ինչպէս:

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Ֆրանսայի երկաթուղեաց ընկերութեան եւ Քրէտի Լիօնէի վարչական խորհրդոյ անդամ.

Մ. ՄԱՐԲԻ. ՏԸ ՖԼԷՌ, Դաւանդանդիք ընկերութեան վարչական խորհրդոյ անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԷՆ ԿԻԼԷՄ, նախկին դաւանապահ.

Մ. Յ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիօնէի.

Թուրքիոյ Տնօրէն Գ. ԱՍՏՈՒԱՇՎԱՏՈՒՐ

Պալիս, Սուլթան-Համադ, Բասափ Քաթրէնդու

Ընկերութեան վրայ տեղեկութիւն առնելու համար դիմել Քրէտի Լիօնէի.

ԾԱՆՕԹ. — Շահաւոր դիմք պիտի տրուի այն ֆեֆիքն որ կարեւոր արդիւնք մը բազմաթիւ քաղաքացիներու:

9—10

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

(AGENDA INTERNATIONAL)

ՅԱՌԱՋԻԿԱՅ 1905 ՏԱՐԻՈՅ ՀԱՄԱՐ

ԹՈՒՐԿԵՐԷՆ, ՀԱՅԵՐԷՆ, ՖՐԱՆՍԵՐԷՆ ԵՒ ՅՈՒՆԱՐԷՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Գին

Պարզ Կապ, 3 Դրու

Անգղ. Լաթակապ, 5 Դրու

Ոսկեգոծ Կապակապ, 8 Դրու

ԿԸ ԴՅՆՈՒՐ

Կ. Պոլսոյ եւ զաւառաց բոլոր Դրամաւաններու եւ Թղթաւաններու համար:

ՀՐԱՏՈՐԱԿԻՁ Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ, ՊԱՅՊԼ-ՀԱՌԻՁ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Լիժէ երախայ մը նիճար է և չի գաւալիր նէ, ակորժակ չունի և կերածը կատարեալ չի մարսեր նէ, և ակույնները — որոնք չեն մեծնարկօր նէ — ոչ բնականապէս միւս աղետները կ'աւելցընէ թող իրեն տրուի:



SCOTT'S EMULSION.

Ասիկայ մանկանց համար ակորժիկ կերակուր և դէղ մըն է, և երախայն զայն խմած ատեն, վերջի ատիճանի ուրախութեան մէջ կ'ըլլայ: Սայրը շուտով կը տեսնէ թէ ինչպէս երախային, բոլոր վիշտերը անմիջապէս կը դադրեն: որպէս թէ նոր արիւն և նոր կեանք բոլոր անկարգութիւնները չնչնով մանկան արտուրը առողջութեան և զուարթութեան փոխադրեցին: Երախայն միշտ պատրաստ է այս նոր (ուտելիք և) ըմպելիքին և ակորժակով կրեմք: Արեւիսի գաւալել և պղտիկ ձերմակ ակույնները առանձնաւի և վիշտերու կ'ընկոնէ երեան էլլել: Ըստօթի Բաղադրութիւնը երախայից առողջարար գիրութիւնն և զաւարտմ կուտայ, մարսողութեան կ'օգնէ և մարմնոյ ընդհանուր զօրութիւն կը պատճառէ:

ԸՍԴՕԹԻ ԲԵՂԱԹՐՈՒԹԻՒՆ

Բոլոր աղայոց Սիրելին է և զանազան շուտով վարդազոյն երեղթի և զօրաւոր և կատարեալ առողջութեան պատկերներու կը փոխէ: Ըստօթի Բաղադրութիւնը վրան այս նշանով վարդազոյն փաթեթի մէջ ծալուած շիշերէն կը ծանցուի:

Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

Բուր տեղաւորութիւն և տեղաւորութիւն իւր ծախէ:

20



ՅՈՎԱԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

Ա.Ս.Ս.Մ.Ն.Ա.ԲՈՅԺ

Մուղաֆէրիէ Հիւանդանոցին և

Պարսկական Դիւանատան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զրահեան աքաբման

Պալպալեան ամէն օր ակոյսի ամէն տեղակ հիւանդութիւններով տառապողներ, կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի և Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան օր և է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'ե. րախաւօրէ իր լեցուցած ու չինած ակոյսները: Ցորեկները ակոյս քաշել ատու համար որոշ վարձք մը չկայ: Քաշել տուողին կամքէն կախեալ է: Վկայեալ տառամարտ. ժուհի Տիկին Բօլին և և կը գտնուի միշտ նոյն դարմանատան մէջ: Աղփայեցում ձրի 1) — 10

ԼԱ ՖՕՆՍԻԵՐ

LA FONCIERE

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հրեհի, Կեանքի և փոխադրութեանց

Դրամագլուխ 60,000,000 ֆր.

Սոյն ապահովագրական հանրածանօթ ընկերութեան կեդրոնական Տնօրէնութիւնը կը գտնուի Բարիք և Դրամատունն է Դիւանի Լիօնէն:

Թուրքիոյ ճիւղին համար Ընդհ. Տնօրէնն է Պ. Սիւլվէն Միլ, և դրասենեակները կը գտնուին Պալատիա, Պերէքէթ խան, Թ. 10—11:

ԼԱ ՖՕՆՍԻԵՐ ապահովագրական ընկերութիւնը ինչպէս հրեհի և առեւտրական փոխադրութեանց, նոյնպէս կեանքի ճիւղին համար յոյժ նպաստաւոր պայմաններ կը ներկայացնէ իր բաղմամբ յաճախողներուն զօրս միշտ գոյ թողուցած է: 3—10

ՄԱՍԻՆ

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ



ԹԻԻ 48



4 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1904

ԱՐՄԱՅ ԵՒ ԻԶՄԻՐ

Նոյեմբեր 28ի շաբաթ օրը ուշագրաւ եղաւ Պոլսահայ համայնքին համար՝ Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին վերադարձին պատճառաւ դէպի իր Աթոռը, Սիս:

Այս օրս ալ, 4 Դեկտեմբեր, իր նշանակութիւնը ունի՝ Իզմիրի Ս. Ասաջնորդին ուղեւորութեանը պատճառաւ դէպի իր պաշտօնատեղին: Որովհետեւ, Դուրեան Սրբազան՝ առաջին անգամ ըլլալով կըստանձնէ հովուական պաշտօն մը, իր բովանդակ կեանքը նուիրուած ըլլալով, եկեղեցական ասպարէզը ընդգրկելէն ի վեր, քարոզչութեան, ուսուցչութեան, գրագիտութեան ու մատենագրութեան, որոնց խտացումը կամ կեդրոնացումը եղաւ Դպրեվանքին վերատեսչութիւնը զոր վարեց այնքան արդիւնաւոր կերպով: Արմաշի մենաստանին մէջ իր ունեցած մտաւոր ու վարչական գործունէութեան ինը տարիները, — սկսելով այն թուականէն ուր յաջորդեց Օրմանեան Ս. Պատրիարքին՝ իբրեւ Փոխ-Վանահայր և վերատեսուչ, — շարք մը եղան ուսումնարանական բեղմնաւոր շրջաններու, իտեալ կեանքը ներհուն հոգեւորականին որ կը սիրէ առանձնութիւնը ու լուսկեաց աշխատութիւնը վանական խաղաղիկ մթնոլորտին մէջ, Տաճարի մը շուքին տակ, զանգակատան մը առնձնութեամբ որուն ղօղանջիւնները միայն կուգան խլել զինքը իր խոկմունքէն և ուսումնասիրութիւններէն:

Բայց, ճգնաւորի մը կեանքը չէր որ ունեցաւ Դուրեան Սրբազան Չարխափանի մենաստանին մէջ որ, կղերանոցի կամ դպրեվանքի փոխուելէն ի վեր, եղաւ կրօնային

բարձրագոյն վարժարան մը, — Յունաց Հէյպէլիի աստուածաբանական դպրոցին մէկ նմանութիւնը, — ուր մտաւոր կեանք մը կ'ենդունար, և խմբովին կը դիմէին պատանիներ՝ ո'չ թէ պարզապէս կուսակրօնութեան պատրաստուելու, այլ ուսեալ եկեղեցականներ դառնալու բաղձանքով: Այդ Հաստատութեան առաջին կաղմակերպիչը ու վարիչը եղած էր Օրմանեան Սրբազան որուն Պատրիարքական ընտրութիւնը պէտքը կըզգացնէր արժանաւոր յաջորդի մը ու կարող ձեռքի մը: Այդ ընտրելին ինքնին կը ներկայանար Պատրիարքարանի ու ինքնակալութեան մտքին, և հանրութեան ալ մտքին որ համակիր վերաբերումով մը կը հետաքրքրուէր Դպրեվանքին, — Դուրեան Սրբազան:

Քարոզելու և դասախօսելու կարողութիւնները որչափ ալ գերազանց ըլլային իր մէջ, լիովին չպիտի գոհացնէին ներկայացած պէտքը, եթէ վարչական կարողութիւնը պակսէր երիտասարդ վերատեսչին, — այն ատեն տակաւին Վարդապետ, — որ այս երեւակ արժանիքներով ու իր անձին հմայիչ լրջութեամբը այնքան սիրուեցաւ ու յարգուեցաւ իր սաներէն: Դպրեվանքը մինակ ուսուցչապետի պէտք չունէր, այլ վարչագէտի ալ մատակարարական ընդարձակ գործ մը կար, թէ՛ դպրոցին համար որ ունէր միաբան, պաշտօնեայ, ուսանող, և թէ՛ վանքին համար որ ամէն տարի կընդունէր հաղարաւոր ուխտաւորներու այցելութիւնը. եղիչէ եպիսկոպոս հաւասարապէս գոհացուց այդ կրկնակ ու տարբեր պէտքերը:

Եւ սակայն, անկեղծ տպաւորութիւն մը յայտնելու համար, իր լեզուազէտի ու մատենագրի հմտութենէն և իր վարչագէտ և կեղեցականի կարողութենէն դուրս, կամ վեր, Դուրեան Սրբազան կը սիրուի իր պարզասէր ու անբասիր հոգեւորականի արդար համբաւին և իր գրագէտի ու բանաստեղծի ղիւթիչ գրչին համար, որուն արդիւնքները, — պատիւ կը համարինք մեզի շնորհիւ այս առթիւ, — վայելած է Մասիս 1900էն ի վեր, հազուադէպ կերպով, իրա՛ւ, բայց ամէնէն շատը մեր թերթերուն մէջէն՝ եթէ ոչ միակը ըլլալով:

Ու այսօր ալ, բաղդը ունինք մեր ընթերցողներուն ներկայելու քերթուած մը զոր, Դուրեան Սրբազան, իր մեկնումի հապճեպ պատրաստութեանց մէջտեղ, գրեց Մասիսի համար, չի մերժելով խմբագրութեանս հրաւերը: Ն. Դերապատութեան համար անակնկալ մը պիտի ըլլայ երբ տեսնէ թէ, թերթիս այս թիւը մեծ մասամբ իրեն նուիրուած է իբրեւ գրական յարգանք մը՝ գրագէտ և կեղեցականին, Չիթիէ-Սարաֆի, Լեւոն Քիրիչճեանի, Վարուժանի (Նղիշէ վարդապետ) և խմբագրութեան կողմէ ստորագրուած գրուածքներով որոնց կը յուսայինք միտցնել Հարմակի ալ մէկ յօդուածը, եթէ ժամանակին ստացած ըլլայինք:

Այս գրական-լրագրական յարգանքի արտայայտութեան կը միացնենք մեր ողջերթի բարեմաղթով թիւնները Սրբազան եղբորը վաղամեռ բանաստեղծին որ հոգեցունց շնորհով երգած է իր մահուան սկարին մօտ՝

Ի՛նչ մնար բարով Ստուռած եւ արեւ

Որ կը պալլար իմ գլխուս վերեւ

Պետրոս Դուրեանին այնքան կանուխ մեկնումը աշխարհէ, իր դալկահար բանաստեղծի յիշատակը, իր հիւանդ երիտասարդի տառապանքներուն պատմութիւնը, իր սէրերը ու իր քերթուածները, — ամէնքն ալ տխուր, — եկած խառնուած են կարծես այն իսկ դալկառումին զոր կը տածենք Նղիշէ եպիսկոսինկատմամբ, իր վարդապետութեան օրերէն, երբ պարզ քարոզիչ մըն էր, և ամէն ան-

գամ որ առիթը կը ներկայանայ, — ինչպէս ներկայ պարագային մէջ, — մեր համակրանքը արտայայտելու գրագէտ Սրբազանին, համակրանքի բաժին մըն ալ նուիրած կ'ըլլանք Պետրոս Դուրեանին:

Իզմիրցիները որոնք այնքան գիտակից ու արժանաւոր ընտրութիւն մը կատարեցին՝ Մեղքիսեղէկ Սրբազանի մահուամբ թափուր մնացած իրենց առաջնորդական ւթոտին համար, արժանաւայել ընդունելութիւն մը վերապահած են իրենց նորընտիր Առաջնորդին: Իրենց կենցաղասիրութիւնը, եկեղեցասիրութիւնը ու գրասիրութիւնը միահաղոյն կերպով ներշնչած են զիրենք այս հանդիսաւոր առթին մէջ, և օրաթերթերը պիտի տան մեզի մանրամասնութիւնները կատարուելիք ընդունելութեան: Բայց, այդ հանդիսաւորութիւններէն, շնորհաւորանքի այցելութիւններէն, պատարագէն, քարոզէն, կոչունքներէն ետքն է որ, Դուրեան Սրբազան՝ առաջնորդարանի իր խոցին մէջ առանձնացած՝ պիտի խորհի իր հովուական պաշտօնին մէջ օգտակար դառնալու եղանակին վրայ, ինչպէս խորհեցաւ օգտակար դառնալ իր վերատեսչի պաշտօնին մէջ երբ ոտք կոխեց Դպրեվանքը: Արմաշ կամ Իզմիր, իրեն համար տարբեր հրապոյր մը չունին, մէկը լերան մը կատարը բարձրացող մենաւոր վանք մը ու միւսը ոգեւորութեամբ լեցուն ծովեղերեայ քաղաք մը ըլլալուն պատճառաւ: Իրեն համար՝ էականը իր հոգեւորականի պաշտօնն է, որուն պահանջումներուն բոլորանուէր դառնալու պատրաստակամութիւնն ու կարողութիւնը միանգամայն ունի:

Դուրեան Սրբազանի առաջնորդութեան օրով եթէ եկեղեցի, դպրոց ու թեմօրէ աւելի՛ չէն, աւելի՛ բարեկարգ ու աւելի՛ գոհացուցիչ վիճակ մը պիտի ստանան, — ինչ որ Իզմիրի հայ համայնքին բաղձանքն ու վստահութիւնն է, — կը սիրենք յուսալ որ, գրագէտ եկեղեցականին ներկայութիւնը գրգիռ մը ըլլայ որքան կրթական գործին՝ նոյնքան ալ գրականին շարգացմանը միջավայրի մը մէջ որ, ատեն

մը, Պոլսէն ետքը, Թրքահայոց մտաւորակա-
նութեան է՛ն փայլուն ներկայացուցիչն էր,
իր գրեհական հրատարակութիւններովը:

Տ.Ա.

ԳԱԼՖԱԵԱՆ ՈՐԲԱՆՈՑԻՆ ՇՈՒՂՁԸ

Մանիսի նախորդ թիւով հրատարակած
էինք Դալֆաեան Որբանոցի տարեգրաւոր
տօնման և նորակառոյց շէնքին օրհնութեան
հանդէսը, իր ընդհանուր գիծերուն մէջ, ինչ-
պէս նաև ամփոփոյքը Տիկնանց Խնամակա-
լութեան տեղեկագրին զոր կարդաց Բար-
թող էֆ. Թէլեան, արդիւնաւատ անդամը
այդ մարմնին:

Այդ ամփոփոյքին մէջ՝ իբր կատարուած
իրողութիւն ներկայացուած էր Որբանոցին
եւմտական վերակազմութիւնն ալ: սակայն
այս յիշատակութիւնը կամ նօթագրութիւնը
տեղեկագրին ոգիէն ու բացատրութենէն
տարբերելուն՝ հարկ կը համարինք ձգբռնել,
գէթ համառօտիւ:

Տեղեկագիրը կը յայտնէր թէ Որբանոցը
երեք տեսակ վերանորոգումի կը կարօտէր,
բարոյական, նիւթական և եւմտական, որոնց
առաջին երկուքը տեղի ունեցեր էին, և կը
մնար երրորդը՝ այն է եւմտականը որ ան-
հրաժեշտ է: Վասն զի, Որբանոցը՝ անցեալ
տարեշրջանի հաշիւը հիմ քռնելով՝ տարին 750
լիրայի չափ ծախք ունի, և որոշ հասոյթ՝
միայն 350 լիրա, — որուն մեծագոյն մասը կը
կազմէ վեհ. Կայսեր կողմէ շնորհուած օրա-
կան հացի ու մսի պարէնին արժէքը, — որով
ամէն տարի 400 լիրա կը պակսի, զուգակշ-
ռելու համար եւմտացոյցը:

Իսկ միւս կողմէ, ծախքը կըսպառնայ ա-
ւելնալ հետզհետէ, վասնզի սրբուհիներուն
թիւը 61ի հասնելէ ետք՝ ամէն օր նոր ի
նորոյ անտէր աղջիկներ կը ներկայացուին և
այնպիսի՝ պարագաներով որ անհնար կը
դառնայ մերժել:

Թէլեան էֆ. եզրակացուց թէ Տիկ-
նանց Խնամակալութիւնը ներկայ շրջանին
մէջ ալ պիտի ձեռնարկէ Որբանոցին եւմ-

տական վիճակը վերակազմելու և յոյս ունի
որ իր ջանքերն ի դերև չպիտի ելլեն:

ԱՐՄԱՇԻ Խնամակալութիւնը, Դուբեան
Սրբազանի մեկնումէն առաջ, յաջորդաբար
երկու նիստ կազմելով՝ Ս. Պատրիարք Հոր
նախագահութեամբ՝ վերջնական կարգադ-
րութիւններ ըրաւ Դպրեվանքի մասին: Տ.
Թորգոմ վրդ. նշանակուեցաւ Վանահայրա-
կան Փոխանորդ և Տեսուչ, իսկ Տ. Մեսրոպ
վրդ. (մեր հմուտ աշխատակից Հարմակը)
Տեսուչ Ուսումնարանի: Ամէն կարեւոր կար-
գադրութիւն պիտի որոշուի Ս. Պատրիարքին
կողմէ, — որ միանգամայն Արմաշի վանահայրն
է ու Խնամակալութեան նախագահը, — ամէն
չարթու տեղեկագիր ստանալով վանքէն:

Տ. Թորգոմ և Տ. Մեսրոպ վարդապետ-
ները, որոնց կարողութիւնը տարիներէ ի վեր
մօտէն գնահատած էր Դուբեան Սրբազան,
իր իսկ ընտրելիներն էին այս տեսչական
պաշտօններուն համար, այնպէս որ Դպրե-
վանքի նախորդ վերատեսուչը գոհ սրտով
կը մեկնի մայրաքաղաքէս, վստահելի ձեռ-
քերու յանձնուած տեսնելով Դպրեվանքը՝
թէ՛ մատակարարական և թէ՛ ուսումնական
տեսակէտով:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ՝ պահելով հանդերձ իր Դրական
Շտաբաթաթերթի արդի ձեւն ու հանգամանքը
և նոյն խմբագրութիւնը որով կը հրատա-
րակուի 1900էն ի վեր՝ 1905ի սկիզբէն (2-րդ
շրջան) պիտի կրէ կարգ մը բարեփոխումներ
որոնց նպատակն է աւելի գոհ թողուլ մեր
բազմաթիւ ընթերցողները: Յառաջիկային
վերապահելով մանրամասնութիւնները, կը
փութանք ըսել միայն թէ վարչական — մատա-
կարարական մասը աւելի կանոնաւոր հիմերու
վրայ դնելու հոգ պիտի տարուի: ՄԱՍԻՍԻ
հասցէն է այսուհետեւ,

Տճօրհնութիւն «Մասիս»ի
Թ, 28, Խօրասանեան Խան, Սիբեհի
Կ. ՊՈԼԻՍ

ԿԸ ՍԽԻՆՍ ԶԻՍ

«Կը սիրե՞ս զիս» հարցուց Յիսուս Պետրոսին՝
Որուն ցըրուած երազներուն կըսկիծէն
Իր զարթումի յոյլ վայրկեաններն կը հեծեն.
— Այո՛, գիտես թէ կը սիրեմ ըզքեզ, Տէր,
Յորչափ դողդոջ իմ այս չուրթերըս խօսին,
Յորչափ ծովուն այս ալիքները հոսին...
Քո՛ւկդ են բոլոր մեր տենչանքներն ու յոյսեր:

«Կը սիրե՞ս զիս» հարցուց դարձեալ Տէրն իրեն,
Ու Պետրոսի փըղձկումներէն կաթեցան
Աղի շիթեր վիմատառած ու անձայն.
— Այո՛, գիտես թէ կը սիրեմ ըզքեզ, Տէր,
Յորչափ աղիքս գութ ունենան ու սիրեն,
Յորչափ խութներն այս խորքերուն մէջ տիրեն...
Քո՛ւկդ են բոլոր մեր պաշտումներն ու վիշտեր:

«Կը սիրե՞ս զիս» երեքկնեց Տէրն, ու կեփաս
Ամալի մը պէս խռոված՝ ըզգաց ներսիդին
Ուրացումի ահեղ անկումը շանթին.
— Ահ, գիտես դու, գիտես ամէն ինչ, ո՛վ Տէր,
Թէ կը սիրեմ ըզքեզ, ցորչափ Սէրդ անհաս
Ճառագայթի մը քաղցրութեամբ թափի վրաս...
Քո՛ւկդ են բոլոր մեր հոգիներն ու սիրտեր:

— Դնա՛ արածել իմ ոչխարներս, և դու ինքն
Հովիւ եղած՝ ա՛ռ քեզի հետ ցուպ ու սրինգ,
Մինչև այն օրն՝ ուր իյնայ ցուպդ ի գետին
Եւ ուրիշներ կապեն մէջքիդ թոյլ գօտին.
Մինչև այն օրն՝ ուր քու սըրինգըդ մաշած
Ա՛լ չարձակէ այրումի երգ մը կամ լաց.
Մինչև այն օրն՝ ուր պիտի ըզքեզ ալ տանին
Հո՛ն ուր մահու դէմ կը խայտայ կենդանին:
Դնա՛ արածել իմ ոչխարներս անձանձիր,
Եւ ա՛յս է վարձքըդ թէ զիս չա՛տ սիրեցիր:

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ

ՍԻՐՈՒԱԾ ԴԵՄՔԵՐ

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆ

Ասպարէզը չէ որ պատիւ կը բերէ
մարդու, այլ մարդն է որ պատիւ
կը բերէ իր անպարէզին
ԼՈՒԻ ԲԱՍԹԷՈՒ.

Ինչպէս որ, ասկէց տարիներ առաջ «Ծա-
նօթ Դէմքերու» մեծանուն հեղինակը, բա-
ռերու պղտիկ խաղով մը կամ պարզ չրջու-
մով մը ակներեւ ճշմարտութիւն մը կը դնէր
մէջտեղ, Օրմանեան Սրբազանի համար «ե-
պիսկոպոսներուն երիտասարդը ու երիտա-
սարդներուն եպիսկոպոսն է» գրելով, նոյնը
կարելի է կրկնել այսօր Դուրեան Սրբազանի
համար, աւելի հաստատապէս ու առաւելա-
դոյն իրաւունքով և աւելցնել նոյն իսկ.
«Եպիսկոպոսներուն գրադէտը և գրագէտնե-
րուն եպիսկոպոսը»: Ոչինչ աւելի ճիշդ ու
անկեղծ արտայայտութիւն պիտի ըլլար գրու-
ղի մը գրիչին տակ:

Տեսած էք զինքը.

Պարթև հասակ, յաղթ կազմուածք, պատ-
կառազդու երեւոյթ. առաջին ակնարկով:
Առոնք սակայն բանք են, նոյն իսկ առա-
ւելութիւններ՝ եթէ կուզէք, զորս շատեր
ունին, նոյն իսկ ոչ—եկեղեցականներ: Բայց
ինչ որ գրաւիչ է, եզական ու զմայելի, իր
զուխն է, իր դէմքը, իր նայուածքը, իր
փայտը: Օհ, «անհունապէս այդ փոքրերը»,
երբ բաղդ ունենաք, մտերմութեան մէջ,
մօտէն դիտելու ու վայելելու զանոնք:

Այսօրուան օրս, երբ երիտասարդները,
յես գիտեր ինչու, կանուխէն սկսած են ճա-
ղատ դառնալ, Դուրեան Սրբազան, իր յի-
սունք friser ընելու ատեններուն իսկ մօ-
տիկ, առիւծի մը պէս առատ ու խիտ մա-
ղբու սաղաւարտ մը կը կրէ դեռ իր գլու-
խին վրայ, որ թաւ ու թանձր անտառի մը
նմանութիւնը ունի, որուն վրայ սակայն
սկսած ըլլայ ձիւնել: Անտառներ կան որոնք
իրենց անսահման ծլուծին ու ծաւալումին
մէջ, մինչև ջուրերու եզրը, բնակութիւննե-

րու ոտքը, քաղաքներու դուռը ափ կ'առ-
նեն, կուգան, կը հասնին, կը պաշարեն դա-
նոնք նախանձոտ դուրգուրանքով մը, կար-
ծես լողորովին իրենց ստուերին մէջը ծրա-
րելու համար: Ու ճիշդ այդ տպաւորութիւնը
կուենեայ մարդ, երբ առաջին անգամ կը
տեսնայ մաղբուր յորդ ու բուռի այդ բու-
սականութիւնը, որ այդքան լեցուն ու իմաս-
տուն՝ ճակատ մը կը չրջապատէ, կը պղտիկ-
ցնէ, իր շուքին տակ կը չքացնէ: Երբ մարդ,
հեռուէն միայն ճանչցած է Դուրեան Սրբա-
զանի մեծ արժանիքը, լայնախոս միտքը, խոր
հմտութիւնը ու բազմադիմի կարողութիւն-
ները, ձեռքովը դրածի պէս կըսպասէ Հիւ-
կօեան կամարակերպ ճակատի մը դէմ յան-
դիման գտնալու ինքզինքը և կ'ապշի կը
մնայ տեսնալով այդ նեղ, երկու նուրբ գի-
ծերով խորոմուած մթին ճակատը, երբ ան-
դին այնչափ դատարկ ու անչափ մարդիկ,
իրենց անապատական ճակատներով կը պար-
ծին: Եւ սակայն, ճիշդ այդ մթին ճակատը,
որուն վրայի հորիզոնական զոյգ խորոմ-
ները ճեպընթացի մը գիծերն են կարծես ուր-
կէ մտածումը կը սուրայ կը սաւառնի,—ճիշդ
այդ մթին ու նեղ ճակատը, ճնշուած օդի, խը-
տացած essenceի տպաւորութիւնը կընէ վրաս
և չեմ կշտանար դիտելով զայն ու խորհելով
հակասութեանը բոլոր այն բաներուն՝ որոնք
պղտիկ ծաւալ ունին ու մեծ կարողութիւն:
Իր թուխ դէմքին վրայ, ամէն բան կը
միտի մռայլ, խորհրդաւոր, մեծաշուք ըլլա-
լու և սև աչքերուն, նեղ ճակատին, ալե-
խառն մօրութիւն վրայ, կուսակուած թըխ-
պայորդ ու գորշ ամպերու որոտումը, մրրկի-
լը, փայլատակիլը պիտի կարծէիր տեսնալ:
Բայց, փոխանակ ատոր, հաճելի անակնկալը

կ'ունենայ մարդ յուսախար ըլլալու և ըստ-
ուեքներու այդ դէպքերուն վրայ յանկալի՝ կը
նշմարես, նուրբ, անբացատրելի, անշօշափելի
երկնային ժպիտ մը՝ որ դէմքի գիծերուն
յօրինուածքին իսկ բնական արդիւնքն է,
առանց մասնաւոր դիտումի կամ գիտակից
ջանքի մը ծնունդ ըլլալու և որ տեւական
ծիածանի մը պէս՝ պսպղալով կը չեչտէ ու
աւելի աղբեցիկ, գրաւիչ կընծայէ նայուած-
քին խորութիւնը, դէմքին խորհրդաւորու-
թիւնը, ամբողջութեան պատկառանքը:

Նոյն բանը իր սե, լայնաբիւր աչքերուն
մէջ, այնպէս ինչպէս Դուրեանները միայն
ունին: Խիստ, խրոխտ, մթամած, խորաթա-
փանց աչքեր՝ որոնց մէջ պզտիկ ու մշտա-
փայլ շողիւն մը նոյն դերը կը կատարէ: Ինչ
որ ունի յաւերժական ժպիտը, կրօնաւորի իր
լուրջ ու սգաւոր դէմքին վրայ: Հիանալի-
րէն թովիչ ու գեղեցիկ աչքեր՝ որոնք Նար-
Պէյի կամ Եղիշէ Այվազեանին նազենի ու
կանացի pailletés d'or աղւորութիւնը չու-
նին անշուշտ, բայց աւելի առնական,
աւելի սաւառնող, մագնիսական ու պաշ-
տելի հմայք մը ունին, զոր ըմպելով չես
յափրանար, ինչպէս վաղամեռ բանաստեղծը
պիտի յափրանար «անյուսութեան այն
սե կաթէն» չատ ըմպելով:

Անբասիր, սակաւապէտ, սակաւախօս,
հեռատես, նրբամիտ, գործունեայ, խստակրօն,
խոնարհ, հեղահամբոյր ու սկզբունքի տէր
միանգամայն: Լեզուազէտ, գրագէտ, պեր-
ճախօս քարոզիչ, բանասէր ու բանաստեղծ
միեւնոյն ատեն:

Եկեղեցականութեան, հանրային գործե-
րու եւ մամուլի մէջ մասնաւոր մտած մէկը
չեմ գտած որ, իրաւացի կամ անիրաւ կեր-
պով դատաւիտուած կամ հակառակորդներ
յարուցած չըլլայ, իր դպած չահերուն համե-
մատութիւնով, այն աստիճան որ ա'լ բնական
օրէնքի կարգ անցած է ինծի համար, ամէ-
նէն չնորհքով ու պարկեշտ մարդուն համար
իսկ լսել խելքէ միտքէ չանցած չարախօսու-
թիւններ ու զգուելի զրպարտութիւններ,
Դուրեան Սրբազան անօրինակ օրինակ մըն է
այս տեսակետով, քանի որ իրարու ամենա-

հակառակ տարրեր կը միաբանին ու կը ձայ-
նակցին իր անձին ու գործունէութեան ներ-
քողը՝ հիւսելու համար եւ ամէնէն անհաշտ
չրջանակներու մէջ ընդհանուր ու անսահման
համակրութիւն կը վայելէ:

Ընդհանրապէս եկեղեցականներու հետ
մօտէն ծանօթութիւն հաստատած ու տեսու-
թիւն ունեցած ատենս, միշտ այն տեսակ
վանող ազդեցութիւն մը կ'ունենամ անոնց-
մէ, այն տեսակ խորշիկ բաներ ու տգեղ ա-
րարքներ կը տեսնամ անոնց շատին վրայ որ
ինքնիրենս փառք կուտամ, եկեղեցական աս-
պարէզը ընդգրկած չըլլալու համար, ինչ որ
après tout, անկարելի բան մը չէր: Ահա
սակայն, Դուրեան Սրբազան, մէկը այն խիստ
հազուադէպ տիպար եկեղեցականներէն ու
որոնց վրայ քանի կը նայիմ՝ այնչափ ջերմ
բաղձանք կըղդամ կրօնաւոր դառնալու: Այս
պարագան ինքնին, անկեղծ հիացումի ու
պինդ գնահատումի ամէնէն զօրաւոր արտա-
յայտութիւնն է զոր կարենամ երեւակայել
եւ որմէ հեռաւորին չեմ կարծեր սր ձգտած
ըլլայ երբեք, որ եւ է անշահախնդիր եկե-
ղեցականի մաքուր փառասիրութիւն:

ԶԻՖԹԷ-ՍՍՐԱՖ.

“ԲԱՌԱՏԻ, ԻՆ ՀԱՄԱՐ

Սառա Պէոնար առաջին անգամ 1888ին
երբ Պօլիս եկաւ, իր աննման հանճարեղ ար-
ուեստին համբաւն արդէն հասած ու տարած-
ուած էր հոս, և իր տուած 4—5 ներկայա-
ցումներուն՝ ամէն ազգէ թատերասէրներու
հոտանք մը կը լեցունէր Նոր Թատրոնի սրահը
որուն մուտքի գիններն ալ չափազանց սուղ-
ցած էին: Դեկտեմբերի սկիզբն էր, ցուրտ
ու ամպա Բաժ օր մը, ցորեկին գործատեղիս
եկան յանկարծ երեք երիտասարդ բարեկամ-
ներ, Օննիկ, Ներսէս ու Սերովբէ, որոնց
վերջին երկուքն հեռաւոր ազգականութիւն
մըն ալ ունէին հետս: — Ասոնցմէ Ներսէս հե-
ռագրատան մէջ համեստ պաշտօն մ'ունէր.
Սերովբէ պարզ գրագիր էր վաճառականի մը
քով, իսկ Օննիկ, զեռ անդործ—յուսալից
չրջանաւարտ մը:

Ներսէս, որ ամէնէն խիզախն ու լեզ-
ուանին էր,

— Գիտե՞ս, ըսաւ, ինչո՞ւ եկանք քեզի:

— Եթէ ըսես, կը գիտնամ:

— Տե՛ս ինչ է. Սառա Պէռնարը երկու օ-
րէն կը մեկնի: Այս իրիկուն Գամելիազարդ
Տիկիճը պիտի ներկայացնէ, սքանչելի է եղեր
այդ դերին մէջ, կուզենք երեքս երթալ
տեսնել զինքը...

— Է՛հ, զայցէք, ես ի՞նչ ընեմ:

— Բայց, եղբայր, սոսկալի զինքն դրեր
են, բարասիին մուտքը մէկ մէճիտ. մեր
խեղճուկ պիւտճէին մէջ ահազին ծակ մը կը
բանայ, տալ չենք ուղեր, աւելի ճիշդ՝ չենք
կրնար... եկուր բան մը ըրէ մեզի...:

— Ես ի՞նչ կրնամ ընել, Ներսէս, չեմ
հասկնար...

— Գիտեմ որ կրնաս... Տես ինչ մտածե-
ցի: Այս կինը նախ ֆրանսացի է, հետեւա-
բար՝ շիրիմ և շիրիմութենէ ախորժող, և
ապա՝ արուեստագէտ՝ որ մարդասէր և բա-
րեսիրտ պէտք է ըլլայ...: Գաղղիներէն ու
տանաւոր խնդրագիր մը պիտի գրես, չորսս
ալ կըստորագրենք և կը տանինք իրեն...
Ուղածնիս մեծ բան մը չէ. այս գիշերուան
համար 4 հատ Բարատիի ձրի մուտք...

— Խենդ բաներ կ'ըսես, Ներսէս, ես չեմ
կրնար...

— Կրնա՛ս, հապա, և ինչո՞ւ խենդ բան
ըլլայ, եթէ չընդունի՝ ամօթը իրեն, կոկիկ
կլորիկ բան մը գրէ՝, տուր, երկու compliment,
10—20 տող, և վերջաբանը Բառատիի 4
մուտք թող տալ տայ մեզի... Ինչ կը կոր-
սընցունէ...:

— Ո՛չ, ոչ, եղբայր, չեմ կրնար, ժամա-
նակ չունիմ...

... Եւ սակայն, թոյլ ու տարտամ մեր.
մուրիս պահուն իսկ, գրելու ցաւազին ու-
նակութենէս դրդուած, արդէն միտքս սկսած
էր բանիլ ու վնասել, ձեւաւորել տրուելիք
խնդրագրին բառերն, ածականներն ու մա-
նաւանդ վերջաբանը...

Ներսէս շատ պնդելու պէտք չունեցաւ...:
Խօստացայ և մէկ ժամէն գրելով յանձնեցի
իրեն խնդրագիրը, որուն օրինակն ահաւասիկ:

LE PARADIS

REQUETE

A. MADAME SARAH BERNHARDT

I

Sublime enfant de Melpomène,
Toi qui sais, prêtresse de l'Art,
Interpréter sans nul écart
Les passions de l'âme humaine;
A toi, qui viens à pas hardis
Pour nous charmer, par complaisance,
Puisse notre antique Byzance
Te paraître un beau Paradis!

II

Nous désirons voir sur la scène
Ton jeu, tes gestes triomphants:
Ah! mais nous sommes quatre enfants
Privés d'argent et de Mécène!...
Vivant de pain et de radis
N'est-ce pas que te voir, entendre
Ta voix d'or, pure, émue ou tendre
Serait pour nous le Paradis?...

III

Maudissant la misère triste
Qui nous tient sous son bras vainqueur,
Nous faisons appel à ton cœur
A ton noble et bon cœur d'artiste!
Nous n'avons pas dix paras, dix!...
Nous serions heureux, tous les quatre,
D'avoir, gratis, à ton théâtre,
Quatre places... au Paradis!

Վաճառականի գրագիր Սերովբէ բարե-
կամա, իր գեղեցիկ՝ anglaise գիրով, ոսկեզր
փայլուն թուղթի մը վրայ ընդօրինակեց
զայն, և չորս ստորագրութիւններով ծան-
րաբեռնուած, առին տարին, երեքը միասին
0թէլ Ռուայալ երթալու և Տիկին Սառա
Պէռնարին ներկայացնելու համար: Ժամը 8ին
Դուրոնի սրճարանը ժամադրաւայր որդեցին
ինձ... Իմացունելու համար խնդրանքին
արդիւնքը... Մինչև ժամ 10 սպասեցի հոն.
եկող զացող չեղաւ, ենթադրեցի որ կամ
չէին յաջողած Տիկին Սառան տեսնել և կամ
պատասխանը մերժողական եղած էր...:

Հետեւեալ օրն ալ անցաւ. բարեկամներս
չերեւցան ու Սառա Պէռնառ մեկնեցաւ:

Ութ օր ետքը միայն պատահամբ Օն-
նիկին հանգստեցայ որ կ'մկմալով, բառերը

ծամմեւելով պատմեց թէ խնդրագիրը Օթէլ
Ռուսայալ տանելով, հոն դռնապանէն իմա-
ցած էին թէ Տիկինը պտոյտի զացած էր
Պոլսոյ կողմը, պատմական վայրերը տեսնելու,
և չէր վերադարձած դեռ :

Մօտակայ սրճարան մը մէկ ժամ սպասելէ
վերջ, 5—6 կառքերու շարք մը կեցած տես-
նելով պանդոկին դրան առջև, գացեր էին
նորէն... Տիկինն էր որ խումբ մը դերա-
սաններու հետ ներս կը մտնէր... Անմի-
ջապէս ծառայի մը միջոցաւ խնդրագիրը կը
դրկեն ներս : Հազիւ հինգ վայրկեան կ'անց-
նի, և ահա առաջին յարկի հիւրասրահէն աղ-
մըկալից քահանաներու, կոչերու չոխնդ մը
կը բարձրանայ, դուրս կը տարածուի և դու-
ռը բացուելով, դերասանուհի մը բարձրաձայն
ծառան կը կանչէ, պատուիրելով որ ներս
հրամցունէ «չոքս պարոնները»...

Անճրկած շուարած, երեք պարոնները ներս
կը մտնեն, և բոլորովին կապկպուած ու ան-
ճարակ կը մնան խօսուէն և ճլվլուէն 10—
15 դերասանուհիներու ընկերութեան մէջ՝
որոնք չըջապատած էին մեծ Սառան...

Առաջին խօսքը Տիկին Սառա Ներսէսին
կ'ուղղէ, ժպտալից հարցումով մը.

— Ծնորհակալ եմ, պարոն, ձեր սիրուն
խնդրագիրին համար... Դժուր էք զայն գը-
րողը...

Ներսէս, կաս—կարմիր, «Ո՛չ, ես չեմ» կը
պատասխանէ :

— Դժուր էք ուրեմն գրողը... կը յարէ
Տիկինը Սերովբէին դառնալով :

— Ո՛չ, Տիկին, ես չեմ, կը մըմնջէ Սե-
րովբէ թոթովելով :

— Հապա դժուր... կը հարցունէ Օննիկին :

— Ե՛ս ալ չեմ, Տիկին, կը հառաչէ յուսա-
ւից չըջանաւարտը...

— Quel dommage! կը բացադանչէ Սառա
Պէրնար, je serais si contente de voir votre
quatrième ami qui manie si bien le vers
français! Եւ ո՞ւր է, ինչո՞ւ չեկաւ ձեզի հետ
անիկայ...


Խնդրարկու տատամսոտ երրորդութիւնը
չեմ գիտեր ի՞նչ դէմք ու շարժումներ կը
ցուցադրէ այն պահուն, երբ Տիկին Պէռնար

քարթի մը վրայ մէկ քանի տողեր նետելով
պահարանի մէջ կուտայ Ներսէսին, և անոնց
ձախաւեր ու անվարժ révérenceներով դուրս
եկած ատենին կ'աւելցունէ. Dites à votre
quatrième ami, que j'aurai du plaisir à le
voir et que je lui réserve une loge pour
demain soir.

Խնդրագիրն իր արդիւնքը, իր օգուտը
ունեցած էր, մեր բարեկամները Բառատի ե-
կած էին այն գիշեր, և զսոնց ըրած էին
իմացունել ինձ թէ Տիկին Սառա փափաքած
է տեսնել զիս, և ինձ նուիրել օթեանկ մը ուր
թերեւս իրենք չպիտի կրնային ինձ ընկերա-
նալ...

Ա.Ղ.ԵՐԱ. ՓԱՆՈՍԵԱՆ

“ԱՐՄԱՇԻ ՀՈԳԻՆ”



Մէկ ամիսէն ճիշդ հինգ տարիներ անցած
կըլլան այն օրուան վրայէն, երբ Մասիս,
գրական շաքախաթերթի վերածուելով (1800)
իր առաջին թիւին մէջ իսկ կը հրատարակէր
«Արմաշի հոգին» վերնագրով յօդուած մը :
Գուէճի մէջ ուսանող էինք դեռ այն ատեն,
և կը յիշեմ թէ ի՞նչ ոգեւորութեամբ ձեռքէ
ձեռք կը պտրտցնէինք Մասիսի այդ առա-
ջին թիւը, որուն բովանդակած գրական կը-
տորներէն չա՛տ աւելի ազդած էր մեր վրայ
այն պատկերը՝ որ Արմաշի հոգին կը մարմ-
նացնէր :

Արմաշի հոգի՛ն : Այսպէս կ'որակուէր
Դուրեան Սրբազան, իր անկեղծ հիացողնե-
րէն մէկուն՝ Մէրսէտէսի կողմէ : Արմաշի հո-
գին, ջիղը այսինքն, Դպրեվանքին տեւակա-
նութեան, փայլին ու արդիւնաւորութեան
զլխաւոր ազդակը :

Ինքնուրուի պաշտումի արտայայտու-
թիւն մըն է Մէրսէտէսի այդ յօդուածը, որ
բոլորովին Դուրեան Սրբազանի արտայայ-
տիչ պատկերին չուրջ, անոր գեղեցիկ չըջա-
նակը կը կաղմէր : «Այն պէտքով, սիրուն ու
ոսկեսար արեւին պէս» որ մօռյալ ու անձ-
բեւոտ օրուան մը մէջ սեւուրիկ երկինքը կը
պատռէ յանկարծ՝ զուարթութիւն ցողուելով :

լրագրական լուր մը կ'իմացնէ թէ Դուբեան նղիչէ եպիսկոպոս հրաժարած է եգիպտոսի առաջնորդութեան պաշտօնէն...»։ Այս նկարագրել տողերով կըսկսի յօդուածը, որ կը շարունակուի և կը վերջանայ միեւնոյն մտածումով — «Դուբեան պէտք չէ՝ մեկնի Արմաշէն...»։ Ու մեր աչքին առջև կը պատկերացնեն Արմաշի փոխ-վանահայրին մաքրակրօն կենցաղը, յամառ տքնութիւնները, վանքին, վանականներուն և ուսանողներուն նուիրած հայրական խնամքը, և եղբակացութիւնը նոյն յանկերգն է դարձեալ. — «Չէ՛, Դուբեան հո՛ն պէտք է մնայ։ Ինքը պահապան հրեշտակն է այնտեղ, լուսասփիւռ ու կենսատու հոգին, որուն հմայքով ընդելուզուած են գիւղն ու վանքը»։

Այս պահուս աչքի առջև ունիմ։ Մասիսի այդ առաջին թիւը, և կը նայիմ Դուբեան Սրբազանի երազող պատկերին։ Հինգ տարիներ վերջ, այսօր վերստին չափազանցուած չեմ գտներ այն տաք գուրգուրանքը, զոր իր գրական և ուսուցչական անձայն ու անվըճատ գործունէութեան հանդէպ զգացեր էի ուսանողական շրջանիս։ Հինգ տարուան ժամանակամիջոցի մը մէջ, հետզհետէ միջամուխ ըլլալով մեր մտաւորականութեան ներկայացուցիչներուն ներքին կեանքին, քանի՛ քանի՛ համբաւի տաճարներու քայքայումը տեսեր էի։ Որքան գաճէ անհատականութիւններ այդ հինգ տարուան մէջ սայթաքեր էին ու անոնց հանդէպ զգացած պատանկեկան խանդավառութիւններս որչա՛փ ծիծաղելի կ'երեւային այլեւս։

Նոյնը չէր պատահած սակայն Դուբեանի համար, որուն արժանիքը ա՛յնքան աւելի ըմբռներ էի, որքան տարիները հասունցուցեր էին ծանօթութիւններս, և կրօնամոլի անհաշիւ գուրգուրանքին յաջորդեր էր աւելի գիտակից, տրամաբանութեամբ ու հիմնական յարգանք մը։

Այս պահուս, դարձեալ, կը նայիմ իր պատկերին։ Հինգ տարուան մէջ բարութեան ոչ մէկ դիմ սրբուած է իր դիմանկարին վերայէն, ու վեհոգի նայուածքը տակաւին կը շարունակէ հետազօտել մաքուր հոգիներու

ալքերը։ Դուբեան անունը որ վաղամեռիկ քանաստեղծով սկսած էր ժողովրդականանալ ու սիրելի դառնալ, կը շարունակուէր ներփողուել ու յաւերժանալ Սրբազանով, որովհետեւ 1900էն ի վեր — ինչպէս անկէ առաջ ալ — սրբակրօն եկեղեցականի համարուը մթադնող ոչ մէկ ամպ անցած էր անոր վրայէն։ 1900ի պատկերը այսօր ալ նորէն մարմնացումն է «գերազանցապէս բարի մարդուն ու զուարթ հոգիին»։

Բայց շրջանակը։ - Օ՛հ, քայքայուած, կոտրատած է ան բոլորովին։ Շրջանակը՝ Մէրսէտէսի յօդուածին ոգին՝ չքացած է այլեւս։ Դուբեան հեռացաւ Արմաշէն։ Եգիպտոսի առաջնորդական պաշտօնը մերժողը՝ յօժարեցաւ Իզմիր երթալ և այն պահուն ուր այս տողերը հրապարակուին, Դուբեան ողջունած պիտի ըլլայ արդէն իր գործունէութեան նոր դաշտը։ Արմաշի հոգին, ջիղը, զսպանակը այլեւս չպիտի գործէ Դպրեվանքին մէջ. 1900 յունուարի վիճակին վրայ ահա՛ միակ փոփոխութիւնը։

Այլ մենք կը հաւատանք թէ Դուբեան Սրբազան պիտի շարունակէ տածել իր վերին հոգածութիւնը այն վանքին վրայ՝ ուր այնքան քաղցր յիշատակներ թողած պէտք է ըլլայ։

Մենք կը հաւատանք թէ անիկա, քանի որ Արմաշի Դպրեվանքին համար ձեռքէ ելած ոյժ մըն է այլեւս, չիջած արեւ մը, այսուհետեւ պիտի ըլլայ դարձեալ «Արմաշի հոգին» — հո՛գին, այս անգամ՝ ո՛չ թէ զսպանակը, ջիղը, այլ պահապան հրեշտակը, աննրկական, երկնային ոգին, որ հեռունեքէն պիտի գայ ու թեւածի իրեններուն վրայ, իր տաք շունչովը հրահրելու անոնց սիրտերը և խաւարած միտքերուն խորը ճառագայթելու։

Ու այն ատեն Դուբեան պիտի մնայ դարձեալ «Արմաշի հոգին», մարմինին բաժանումէն վերջ թողուած պահապան հոգին, դժբախտ կորուստէ մը վերջ զրկուած երկնային մխիթարութիւնը, որով վերակազմած պիտի ըլլայ իր պատկերին քայքայուած շրջանակը, իր երազող պատկերին, զոր կը գիտեմ տալու իր։

ԼԵՒՈՆ ՔԻՐԻՇՅԱՆ

ՅՈՅՈՎԱՆԵՍՆԵՐ

ԳԵՐ. ԵՂԻՏԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆԻՆ

Մախուր իդձերն անբիծ հոգւոյս աղածրի Գիրգ պաշտումի հիւ վերելով մ'աննքման, Հանճարի մը վեհ բարձրութեան յառեցան Մախուր իդձերն անբիծ հոգւոյս աղածրի:

Լուրջ խորհուրդներն այդ հանճարին լուսալիր ձառագայթի յորդ շողիւնով մը անգին. Հայեցուցին պիտի խառամներն իմ սրբին Լուրջ խորհուրդներն այդ հանճարին լուսալիր:

Յոյս մը անամայ ծաւալեցին հոգւոյս մեջ Ընդմիջասար ծրփանքներէ միշտ հեռու, Կեանքն իր անուր իմաստներովն ապրելու Յոյս մը անամայ ծաւալեցին հոգւոյս մեջ:

×

Ու պարզութեան երեւոյթով անպարզոր Բաւոյն անանց չիցն ցոյլներուն այդ պոսկեր իր մեծութեան հրմայն ինձմէ կը կորգէր Պարզութեան մը երեւոյթովն անպարզոր:

ՎԱՐՈՒԺԱՆ

ՄԵՐ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՌԱՋԻՆ ՅՕԴՈՒԱԾ

Ամուսնութիւնը, մարդկային օրէնքներուն մեծագոյններէն մէկը, մէկն է նաեւ ընկերային կազմակերպութեան կարգին առաջին եղելութիւններուն, որուն գործադրութեան ձեւը, զայն վարող պայմանները, դէպի ան ձգտումն մը թելադրող պատճառները, ուսումնասիրութեան գերազանցապէս արժանի և առաջնակարգ կարեւորութիւն ունեցող հարցեր են, — որովհետեւ այդ պայմաններուն, զանոնք ներշնչող շարժառիթներուն գիտակցական ու կարգաւոր զսպանակէ մը շարժած ըլլալու վիճակէն կախում ունի ցեղի մը ընկերային-բարոյական կացութեան բարւոք

կազմակերպութիւնը, և անոր՝ մարդկային ընկերութեան ամբողջին մէջ, անխտոր ու անսայթաք առաջացում մը ունենալու, ինչպէս իր գոյութեան իրաւունքը արդարացնելու երաշխաւորութիւնը:

Ամուսնութիւնը, — կեանքի մեծ ու խորախորհուրդ առեղծուածը, — միջոցն է սեռին շարունակութեան ու ցեղին պահպանումին ընդհանրապէս, ու որչափ ալ անհնար եղած ըլլայ վերլուծել անոր իմաստը, ու մերկացնել անոր գաղտնալից խորհուրդը իր առեղծուածային թերթերէն փետրատելով զայն, կ'արժէ՝ տալ անոր իրեն սեփական նշանակութիւնը, ընկերային պայմաններու և կարգաւորութեան սահմանին մէջ, ու բանաւոր և գիտակից հասկացողութիւն մը դնել այն շարժառիթներուն մէջ, որոնք մարդը կը մղեն ամուսնութեան:

Մարդոց մէջ, ամուսնութիւնը սեռային պահանջներու գոհացումի միջոց մը, կամ տեսակին պահպանումին բնութենական նախասահմանութիւնը չէ՝ պարզապէս, — ինչպէս կենդանիներու մէջ, — այլ, ունենալով իր խորքին մէջ այդ օրէնքներուն թելադրիչ զօրութիւնը, միանգամայն ընկերային կազմակերպութեան ըմբռնումներու վրայ դարձնուած մարդկային գործ մըն է, ուր աւելի կը տիրէ, ու պէտք է տիրէ, բանականութիւնը, դատողութիւնը, հասկացողութիւնը և գիտակցութիւնը, որպէսզի ան կարենայ ծառայել իր նպատակին ու ապահովել ինչպէս անհատին, նոյնպէս ցեղին կամ մարդկութեան բարօրութիւնը:

Մարդոց մէջ, ամուսնութիւնը կեանքի այն մեծ փոփոխութիւնն է՝ ուրկէ ծագում կ'առնեն ընկերային վիճակի ու անհատական կեանքի այն հսկայական փոփոխութիւնները, որոնք լուրջ ու բարձր պարտաւորութիւններու կ'ենթարկեն գլուխը ամուսնական լուծին տակ դնող մը, և որոնց հաւատարիմ հպատակութեանը և զանոնք պատուարեր կերպով գործադրելու ուստեալ մը պէտք է ըլլայ ու և է ամուսնացող:

Ատկէ՝ է որ կախում ունի ինչ որ ընտանեկան բարօրութիւն ու երջանկութիւն կը

կոչուի, և ինչ որ կ'երայխաւորէ ամուսնացող ահհատի մը պատկանած ցեղին կեանքի, բարոյականի, սերունդի և տոհմային զարգացումի բաղձալի կատարելութիւնը:

* * *

Հիմա, տեսնենք թէ, ի՞նչ պայմաններու մէջ տեղի կ'ունենան ամուսնութիւնները մեր մէջ, ի՞նչ են անհատը կեանքի այդ մեծ փոփոխութեան մղող պատճառները, ի՞նչ շարժառիթներ ու ներշնչումներ աւելի տիրական են ամուսնութեան դիմող անհատներու հոգիին մէջ, լուրջ ըմբռնումներ ու գիտակից բանավարութիւն մը ո՞րչափ տեղ կը բռնեն անոնց սիրտին մէջ, և ո՞րչափ միտմարական է այս երեւոյթներուն իսկական վիճակը:

Ինչպէս ամէն ցեղի, նոյնպէս մեր մէջ, ամուսնութիւնները կը դասակարգուին զանազան աստիճաններու, որոնց իւրաքանչիւրին մէջ այդ դէպքը տեղի կ'ունենայ զանազան պայմաններու մէջ, և մզուած զանազան շարժառիթներէ, զանազան տեսութիւններէ, զանազան ըմբռնումներէ ու զանազան իտէալներէ:

Առաջին ակնարկով, երեք դասակարգութիւններու կարելի է բաժնել՝ ամուսնութեան ձեւը, պայմանները, շարժառիթները ու բնոյթը յատկանշող վիճակները:

Ա. — Ժողովուրդին բարձր դասակարգը:

Բ. — Միջին դասակարգը, և

Գ. — Ստորին դասակարգը:

Կը տեսնուի որ, ընկերային վիճակներու զանազանութիւնն է որ կը ստեղծէ այս բաժանումը, և այդ զանազանութիւնն է որ՝ փոփոխական բնոյթ մը կուտայ ամուսնութիւններու ձեւին ու պայմաններուն:

Արդ, ի՞նչ կերպով տեղի կ'ունենան ամուսնութիւնները՝ մեր բարձր կաշուած դասակարգին մէջ ընդհանրապէս: Ընդհանրապէս հաշիւի վրայ հիմնուած ամուսնութիւններ են այն ամուսնութիւնները՝ որոնք տեղի կ'ունենան մեր high life-ը ենթադրուած դասակարգին մէջ:

Այդ դասակարգէն աղջիկ ունեցող ու և է ընտանիքի մը իտէալն է, իր զաւակը միացնել զաւակին հետ ա՛յն տեսակ ընտանիքի մը,

որ աստիճանակից կը գտնուի իրեն, և ընկերային դիրքի այդ պատճառով, կրնայ պատուարեր խնամութիւն մը նկատուիլ այն միութիւնը, զոր երկու ընտանիքները կը կնքեն այդ կերպով:

Նոյն հաշիւը և նոյն իտէալը կը սնուցուի նաև տղուն ընտանիքին կողմէ, որ բարձր դասակարգէ աղջիկ առնելու երջանիկ գաղափարականին մէջ կը գտնէ ամէն յաջողութիւն, ու ընտանեկան ամէն բարօրութիւն:

Դիւրաւ կրնայ հետեւցուիլ թէ, այս առաջնակարգ գաղափարականին տիրականութեան առջև, ա՛լ կը չքանան յարմարութեան, սէրի, տարեկցութեան, պատշաճութեան, զարգացումի հաւասարութեան խընդիրները, որոնք ա՛յնչափ կարեւոր են ամուսնութեան պէս մեծ գործի մը մէջ, որ չափ ընկերային վիճակով համահաւասար և պատուարեր կեանքի ընկեր մը ունենալու տեսակէտը:

Այսպէս, տղուն ընտանիքին մեծագոյն մտադրանքները կ'ըլլայ, — ինչպէս հաւասարապէս ամուսնացու պարոնինն ալ, — գիտնալ թէ, բարձր դասէն ծանօթ ո՞ր ընտանիքին աղջիկը կրնայ յարմար ընտրելին ըլլալ՝ հարսնութեան համար իրենց տունին: Փնտռողները կը կատարուին, միտքերը կը յոգնին երկար ատեն, — հետազօտութեանը համար յարմար հարսնցուի մը, — ու վերջապէս բաղդատական հաշիւներէ ու փորձարկութիւններէ ետքը, քուէն կը տրուի մէկու մը համար, ու որոշումը կ'արձակուի: Կը մնայ գործը յարմարցնելը: Կրնայ ըլլալ որ ամուսնացու երիտասարդը տեսած ըլլայ իր ընտանիքին հաւանութեանը արժանացած աղջիկը, կամ ոչ, զայն սիրած ըլլայ, կամ ոչ: Բայց որովհետև ընկերային աստիճանակցութեան տեսակէտով յարմարագոյն հարսը նկատուած է այն աղջիկը՝ զոր իրեն կին առնել կ'ուզէ իր ծնողքը, կը հաւանի որոշումին, քանի որ կը մտածէ թէ, պէտք է այդպէս ընել, նկատի առնելով իր ընտանիքին դիրքը և աստիճանը, ուր սովորական աղջիկ մը պատշաճ չէ որ ոտք կոխէ, որչափ ալ մտաւոր, փիղիքական ու բարոյական գե-

րադանց օժտումներ ունենայ ուրիշ մը՝ որ դիրքը, աստիճանը ու հարստութիւնը միայն ունի իրեն ապաւեն, և թերեւս ուրիշ ոչինչ:

Դիմումները, պէտք եղած ձեւակերպութիւններով, տեղի կունենան, ու մեծագոյն հաւանականութիւնով, առաջտրկը չի մերժուիր, քանի որ միւս կողմէ ալ կը մտածեն թէ, երբ ա'յնչափ բարձրէն կուգայ առաջարկը, և ա'յնչափ պատուաբեր կրնայ նկատուիլ այդ բանը, անխելքութիւն է մերժել զայն, մեծ կամ պզտիկ ի'նչ անյարմարութիւններ ալ որ գոյութիւն ունենան, ամուր մը կազմելու և ընտանիք մը ձեւացնելու կոչուած երկու հոգիներու միջև:

Կազմուելիք այս միութեան մէջ, աշխարհիկ տեսակէտները և հանրային դատաստանով չստիւգած մտածումները ա'յնչափ մեծ ուժ մը կը ներկայացնեն երկու ամուսնացողներուն մէջ ալ, որ երկրորդական հաշիւները, — որոնք սակայն կենսական կարեւորութիւն ունեցող բաներ են յաւիտեան կենակցելու ուխտի մը մէջ, — նշանակութիւն ունենալէ կը դադրին առջի բերան, և կը կորսնցնեն իրենց ազդեցութիւնը, աւելի տիրական դորութեան մը առջև, որ է ընկերային տեսակէտով յարմարութեան խնդիրը, և քիչ մըն ալ ուրիշ մտածումներ, երկու կողմին համար ալ:

Փեսայուն կը մտածէ որ. — պահ մը ամէն ուրիշ տեսակէտ մոռնալով, — իր դիրքին լի'ովին յարմար ընտրելի մըն է որ կ'երկարէ իր ձեռքը, եւ իր առջև կը պարզուին շողջողուն հեռանկարներ՝ որոնց կէսը իսկ կրնայ բաւել իր որոշումը եւ հաւանութիւնը արձակել տալու համար. — հարուստ աներ, ճոխ տուն ու պերճանք, հսկայական դրամօժիտ, — ինչ որ անխուսափելի կերպով կ'ընկերանայ այս տեսակ միութիւններու, — անուն, պատիւ, եւ այդ տեսակ տունի մը փեսայանալու փառքը: Ալ յիմարութիւն չ'է մտածել ուրիշ բաներու վրայ, թէ կրնայ կամ կը սիրէ՞ այն աղջիկը՝ որուն հետ իր կեանքը բաժնել կ'առաջադրէ, ֆիզիքական, մտաւոր ու բարոյական ո'ր աստիճան գոհացուցիչ օժտում մը կը ներկայացնէ ան, թէ կրնայ անոր հետ երջանիկ ըլլալ, և դեռ իր կարգին:

Իսկ աղջիկը, նոյնպէս պահ մը ամէն ուրիշ տեսակէտ մոռնալով, աչքին առջև կ'ուրուագծէ այն դիրքը և փառքը՝ որոնք իր պիտի ըլլան, հարսնանալով տունի մը՝ որ ամէ'ն նախանձելի յատկութիւն կը միացնէ իր վրայ, այն պատիւը և ընկերային վիճակը՝ որոնց պիտի տիրանայ, իր վրայ առնելով անունը այնչափ մեծարուած անձնաւորութեան մը զաւկին: Ու անխոհմութիւն կը նկատէ ալ միտք չյոգնեցնել ա'յն տեսակ հաշիւներու վրայ՝ որոնք ի'րապէս մտատանջող բաներ կրնան ըլլալ: Իր ապագայ ամուսինը կրնայ ֆիզիքական ամէն տգեղութիւնով օժտուած արարած մը ըլլալ, կրնայ անմիտին, անբանին, երէկուան խմպիւն մէկը ըլլալ, կրնայ ունենալ անուն մը՝ որ բարոյականի տեսակէտով երբեք յանձնարարելի չըլլայ, կրնայ վատառողջ, ճղճիմ ու առողջական ամէն թերութիւն մարմնաւորող կակ մը ըլլալ, և նոյն իսկ՝ վատահամբաւուած՝ պագալի ախտով մըն ալ: Բայց ասոնց ոչ մէկուն կ'ուղէ հաւատալ աղջիկը, կ'ուղէ սուտ հանել դանոնք, և առանց այլ և այլի, որոշումը կուտայ, քանի որ, իրեն ծանօթներէ ու հեռաւորներէ ա'յնչափ գովաբանուիլը կը լսէ իր ապագայ ամուսինին, որմէ հրաժարիլ՝ յիմարութիւն կը նկատեն ամէնքը: Հապա եթէ ետքը ա'ն ալ չգտնէ, մեծ կորուստ մը եղած չ'է պիտի ըլլայ մերժած ըլլալ մէկը՝ որ ա'յնչափ շողջողուն հեռանկարներ կը պարզէ իր աչքին, և որմէ հրաժարիլ՝ պա'րզապէս բաղդը օտնակոխ ընել պիտի նկատուէր ո և է աղջկան համար:

Ու հի'մնովին վարկպարագի հետեւութիւններով գոյացած համերաշխութեան մը վրայ, միութիւնը կը կ'ըլուի: Ետքէն, ա'լ բաղդը կը վճռէ անոնց երջանկութիւնը:

Այսպէս, իսկապէս բարձր համարուած դասակարգին մէջ, ամուսնութիւնները այս տեսակ արտաքին միակողմանի ու կարճատես հաշիւներու վրայ է որ կը կնքուին, մի'շտ առաջնորդուած երկու կողմին դիրքը ու աստիճանը յարմարցնելու ջանքը ունեցող մտածումէ մը, որ յաճախ սխալ ճամբաներու կ'առաջնորդէ ենթակաները, և պատ-

ճառ կ'ըլլայ ընտանեկան ահաւոր զգացումներու թիւններու, որոնց օրինակները պակաս եղած չեն մեր ամուսնութիւններուն մէջ, և չեն տակաւին:

Կրնան սակայն ընդհանուր այս սովորութիւնն զարտուղութիւններ ալ իրենց գոյութիւնը ունենալ, և երկու կողմի ամուսնացուները, զերծ ամէն աշխարհիկ հաշիւէ ու նկատումէ, իրենց գործին մէջ կրնան լինել աշխատակից, որչափ պէտք է որ գտնուի ամուսնութեան պէս բարձր նշանակութեամբ գործի մը մէջ, իրենց առաջնորդ ունենալով՝ աւելի՛ սէրը, հոգեկան ու գաղափարական աշխարհներու նոյնութիւնը, գեղեցկագիտական տեսակէտներ, և ճշմարիտ երջանկութեան գաղափարական մը:

ՅՈՒՆՎ. Բ. ԱՐՄԷՆ

ՍԱՌԱ ՊԵՌՆԱՐ

Մունէ Սիւլիէն, Դոլլէններէն, Ռայլէն պէրկէն, Ռէժանէն, Նովէլիէն, Հատինկէն և Սիլվէնէն վերջը—չմոռնալով յիշել Բոլէն արուեստագէտը—Պոլսոյ թատերաբեմին վրայ երեւցաւ նաև, երրորդ անգամ ըլլալով, Սառա Պէռնար, տիեզերահռչակ արուեստագիտուհին:

Բերայի և քաղաքիս մինչև յետին արուսճաններուն ու հեռաւոր գիւղերուն մէջ տիրող հետաքրքրութենէն կարելի է դատել թէ ինչ դիւթիչ, ձգողական հրապոյր մը, հմայք մը ունէր Սառա Պէռնարի անուէր ամբոխին համար: Արդէն, ներկայացումներէն օրեր առաջ Բըթի Շանի գրեթէ ամբողջ օթեակներն ու թիկնաթոռները ծախուած էին և գտնուեցան շատեր որոնք կրկին գին վճարելու պատրաստ էին թատրոնին մէջ փոքր տեղ մը, աննշան անկիւն մը գրաւելու համար, և սակայն հարկադրուեցան ետ դառնալ, յուսախաբի խորունկ տրտմութեամբ:

Ինչք որ բարեբախտութիւնը ունեցանք այդ ներկայացումներուն հանդիսատես ըլլալու, այս անգամ ալ պիտի փորձուինք մեր անկեղծ տպաւորութիւնները արտայայտել,

եթէ ոչ մեր համեստ կարծիքն ու գնահատումը՝ համբաւաւոր դերասանուհիին նկատմամբ: Պիտի կատարենք այդ գործը հիացումով՝ Սառա Պէռնարի անվիճելի տաղանդին վրայ եւ սակայն առանց կոյր ու եռանդանարորբ թափի:

Ամբողջ որ վերջին աստիճան դիւրագգած է ու դիւրահաղորդ, անմիջապէս կը յուզուի, կը խանդավառի և յաճախ չի նշմարեր կամ չուզեր նշմարել պարագաներ ու կէտեր որոնք սակայն քննադատին անկողմնակալ բայց անողոք ուշադրութենէն չեն կրնար վրիպիլ:

Երբ Լա Տամ օ Քամէլիային իրիկունը Սառա Պէռնար բեմին վրայ մեզի ներկայացաւ իր մետաքսեայ ու գամելիադարդ շրջազգեստին մէջ, և ակնատես եղանք այն խարուսիկ արտայայտութեամբ կրքոտ զգացումներուն, ինչպէս—հարկ է յիշել, աւաղ—տարիներու ընկճումին տակ աւերուած իր դէմքին—զոր փրկելու չէին զօրեր ուժ գին դրոշմով չպարն ու ներկը—տխրութեան անուշ զգայութեամբ մը սրտերնիս համակուեցաւ:

Այդ զգացումը աւելի՛ չեշտուեցաւ Թոու—Թոուի ներկայացման իրիկունը եւ վերջնական հանգամանք մը ստացաւ մանաւանդ Սաթօի խաղարկութեան ատեն ուր Սառա, մինչեւ անգամ, Հատինկին չհաւասարեցաւ: Ի վեաս Սառաի յիշեցինք Տոմէի խաղին այն սրտաճմլիկ տեսարանը ուր Հատինկ (Սաթօ) աննման բնականութեամբ ու հրայրքով կըրքերու բուն հոսանքէն վարուած, օձի նման կը գալարուէր իր սիրահարին՝ Ժան Կոսէնի օտքերուն առջեւ: Բաղդատելով Հատինկին խաղը Սառաինին հետ, չկրցանք կացութեան չպատշաճեցնել Պօսիւէի հռչակաւոր տողը. «Les restes d'une voix qui tombe et d'une ardeur qui s'éteint».

Արդէն, ասկէց իբր հինգ վեց տարի առաջ, Սառա, Բարիզի մէջ Մունէ Սիւլիի ընկերակցութեամբ Էռնանին ներկայացուցած ատեն՝ բարիզեան թատերական քննադատ մը մերինին նման տպաւորութիւն մը ունեցած էր և կ'աւաղէր այն ժամանակը ուր Սառա

Պէճնար՝ Տօնա Սօլի եւ Մուշէ-Սիւլիի էփնանիի ղերերուն մէջ արտաքոյ կարգի խոնդալա-
ռութիւն մը, ցնորակոծ դառանցանք մը յա-
ռաջ բերած էին ամբոխին մէջ : Ու կը յիշէր
այս առթիւ քերթողին՝ Վ. Հիւկոյի՝ Սառա
Պէճնարին յղած մէկ նամակը որուն մէջ մեծ
բանաստեղծը իր խաղարկութիւն կ'ուղղէր հե-
տեւեալ խօսքերը . «Տիկի'ն, ներեցէք ինձ
յայտնել Ձեզ թէ աննման հանդիսացաք
Տօնա Սօլի ղերին մէջ . գերազանցեցիք օ-
րիորդ Մարսը . ուրիշ բան չի մնար ինձ բայց
եթէ Ձեր ոտքը իյնալ» : Յիշեալ քննադատը
բաղդատութիւն մը կ'ընէր այն ատենուան
Տօնա Սօլին եւ միեւնոյն ղերին վերջին
repriseին միջեւ եւ սա բառերը կ'ա-
ւելցնէր . — «Բաց ի արուեստագիտական տա-
ղանդէն որ երբեք չի կրնար պակսիլ Սառա
Պէճնարի եւ Մուշէ Սիւլիի պէս արուեստա-
գէտներու, Էռնանիի վերջին repriseը առ-
խուր պատրանք մը եղաւ մեզի համար . յի-
շեցինք 20 տարի առաջուան դիւթիշ ու գո-
լորչանման մանկամարդուհին, այն աննման
Տօնա Սօլը որ արցունք թափել տուաւ Հիւ-
կոյի պէս հսկայի մը . յիշեցինք նաեւ այն աչ-
խոյժ եւ կրակոտ էփնանին որ խոնդալա-
ռութեան ճիշդը խլեց դառանցկոտ բազմու-
թիւնէ մը, եւ սա եղբակացութեան յանգե-
ցանք թէ ղերեր կան զորս դերասան մը,
ո՛րքան ալ մեծ ըլլայ տաղանդը — իր փառ-
քի'ն համար — մինչեւ ժամանակ մը միայն
պէտք է կատարել» :

Ո՛րքան ճիշդ է այս դատաստանը :

Ըսել չենք ուղեր այսուհանդերձ թէ
Սառա Պէճնարի համար բոլորովին եկած է
բեմը թողելու ատենը . — թէպէտ իրեն հա-
մար ոչ նուազ նպաստաւոր ըլլար եթէ Բայ-
շէնպէրկին նման իր հոշակին ու փառքին
գագաթնակէտը գտնուած պահուն չքեղ նա-
հանջ մը ընէր, առանց Ֆոէտէրիք . Լըմէթրի
եւ Տիկին Տոսվալի պէս սպասելու որ այսօր
զինքը խնկարկող հանդիսատեսները վաղը
անտարբերութեամբ եւ գուցէ արհամարհան-
քով վերաբերուին իրեն . բայց տարակոյս չկայ
թէ ինչ ինչ բիւսներու, գլխաւորաբար արդի
խաղերուն մէջ, — ինչպէս Ֆոռու Ֆոռու, Սօֆօ,

Դարբնցապէս — ա' մեծ յաջողութեամբ չի
կրնար ներկայանալ . ինքն ալ համոզուած ըլ-
լալու է այս կէտին , քանի որ Բարիդեան
բեմին վրայ բաւական տարիներէ ի վեր այդ
կարգի խաղերէն միայն Դամեթիազարդ Տի-
կիճը կը ներկայացնէ :

Հակառակ ասոր, անշուշտ տակաւին եւ
դեռ երկար ատեն թերեւս, Սառա փայլուն
կերպով կրնայ անձնաւորել Թէօօրայի, Փօս-
փայի, Ֆէօրի պէս ղերեր ուր զգեստներուն
եւ արդուզարդերուն ձոխ սեռը կը ծածկէ
Ֆիզիքական թերին եւ ուր ամէն բան կը կա-
յանայ արուեստագէտին շարժուձեւին ողբեր-
գականութեան մէջ — բան մը զոր Սառա
Պէճնար ունի գերազանցապէս : Արդէն իր
էն մեծ յաջողութիւնները ունեցած է դա-
սական — պատմական խաղացանկին ինչպէս
նաեւ Շէքսպիրեանինին մօտեցող խաղերու
մէջ : Ո՛չ մէկ դերասանուհի իրեն հաւասար
կարողութեամբ ներկայացուցած է, Սառ-
տուի Թէօօրան եւ Փօսփան, ինչպէս նաեւ
վերջերս նոյն հեղինակին Լա Սօնսիէռը եւ
Բօլ Էովիէօի Թէոուանը եւ Մէոիփուը :

Անդրադառնալով Ֆոռու Ֆոռուի, Սօֆօի
եւ Դամեթիազարդ Տիկինին, — երեք խաղեր
զորս Սառա Պէճնարի խումբը ներկայացուց-
երկու քառաջիններուն վրայ — խաղարկու-
թեան տեսակէտով — բացարձակապէս չար-
ժեր երկարել, որովհետեւ այդ ներկայացում-
ները անողոք կերպով արտացոլացուցին մեծ
դերասանուհիին ֆիզիքական անկումը . ու
ո՛չ տաղանդին մեծութիւնը, ոչ թափուած
յուսահատ ճիգերը, վերջապէս ոչինչ կրցաւ
փարատել այդ աննպաստ ու տխուր ազդե-
ցութիւնը :

Աւելի յաջողութեամբ ներկայացաւ Սառա՝
Տիւմա Որդիի խաղին մէջ : Վերջին ատի-
ճան յուզեց Առմանի հօրը հետ ունեցած խօ-
սակցութեան պահուն ուր անաւոր պայքար
մը կը մղուէր իր հօգիին մէջ, եւ չորրորդ
արարուածին մեծ տեսարանին ատեն : Բայց
վերջին արարուածին, այսինքն Մառկոթի
Կոթիէի մահուան տեսարանին, ինքզինքը
գերազանցեց Սառա . այն չարաշուք տեսա-
րանը — ուր կարծես իրաւցնէ թոքախտէ

տառապող կին մըն է որ թափերաբեմին վրայ կը մեռնի, — մոռցնել տուաւ մեզ Սափօի և Յրու Յրուի աննպաստ տպաւորութիւնը. աննկարագրելի է այդ տեսարանն ալ. պէտք է տեսնել Սառա Պէռնարի այլապաշարած և աւերուած դէմքը, լսել խեղդուկ, օրհասի ճիչերը որոնք կարծես զըծուաբաւ կ'ելլեն կոկորդէն, վերջապէս դիտելու է դերասանուհին այդ ճգնաժամին մէջ՝ դադարաւ մը ստանալու համար իր խաղին անհղ վսեմութեան վրայ:

Կ'ըսեն թէ Սառա թոքախտաւորներու հիւանդանոցներ այցելած է, այդ հիւանդութեամբ տառապողները, իրենց յետին վայրկեաններուն, մօտէն ուսումնասիրելու համար: Ատիկայ ճիշդ կը թուի, որովհետեւ իր նգնաժամային խաղարկութիւնը զեղուն է նեմարսութեամբ:

Բազմութիւնը որ—բացի paradisէն — մինչեւ այդ տեսարանը կրնանք ըսել թէ զլացած էր իր ծափերը, մեծ ovation մը ըրաւ դերասանուհիին, որ իր յուզումին սաստկութենէն տոգոյն ու ջախջախուած, քանիցս բեմ կոշուեցաւ իր յաղթանակը վայելելու համար:

* *

Սառա Պէռնար իր խումբով մեկնեցաւ արդէն Աթէնք երթալու համար ուր հինգ ներկայացում տալէ յետոյ մտադիր էր ի տալիս այցելելու. սակայն այդ դիտաւորութենէն ետ կեցած է վերջին պահուն: Յրու Յրուի ներկայացման երկրորդ արարուածէն ետքը, յանկարծ իր միտքը փոխել է:

Իր քարտուղարը յուսահատութեամբ այդ պարագային ակնարկելով.

— «Ի՞նչ պիտի ընենք եթէ Տիկինը իր որոշումը ետ չ'առնէ, կ'ըսէր. պայմանագիրներ ունինք Իտալիոյ թատրոններէն ոմանց անօրէններուն հետ. եթէ Տիկինը — որ Աթէնքէն անմիջապէս վերջ կ'ուզէ Բարիզ վերադառնալ — Իտալիա չ'երթայ, դատեր պիտի ունենանք դարձեալ, դատեր... Չէք դիտեր թէ ո՞ր աստիճան քմահաճ է եթէ Տիկինը վաղը ինձ ըսէր թէ գնա Պօն Մառշէն գնէ, անմիջապէս պիտի երթայի տիրոջը

հետ սակարկութեան մտեւելու, առանց Տիկինին հարցնելու թէ ի՞նչ է իր նպատակը:»

Յայտնի է թէ քմահաճոյքը եւ անհեթեթութիւնը Սառա Պէռնարի նկարագրին ցայտուն կողմերէն են: Շատ անգամ սուղի նստած են իրեն իր անխորհուրդ գործերը, առանց սակայն այդ նկարագիրը փոքր ինչ փոխել յաջողելու: Գուցէ այդ պարագան իր ամէն տեղ եւ ամէնուն կողմէն տեսած արտասովոր ընդունելութեան եւ պատիւներուն արդիւնքն է:

Վերջերս Ֆրանսերէն տեղական թերթ մը իր լրագրողներէն մէկուն Բերայի գաղղիական հիւանդանոցը գտնուող Բիէլ Լօթիի հետ ունեցած մէկ տեսակցութիւնը կը հրատարակէր որուն մէջ հոյակապ ակադեմականը հետեւեալ խօսքերը ըրած է Սառաի նկատմամբ.

— Շատեր չեն գիտեր թէ «մեծ բարեկամուհիիս» սիրտը ո՞ր աստիճան լի է ազնուութեամբ և վեհանձնութեամբ: Ահ, որքան կը ցաւիմ իմ նաւիս պատիւը իրեն չկարենալ ընելուս համար... եթէ կարենայի հոս զինքը ընդունիլ...

Եւ Լօթիի երազուն նայուածքը տարտամին մէջ կը կորսուէր...

Սառաի քուլմէնները եւրոպայ եւ մասնաւոր Ամերիկա անազին գումարներ չահեցուցած են իրեն. սակայն հուշակաւոր դերասանուհին հարստութիւն չունի. նոյն իսկ պարտքի տակ է: Այն հարիւր հազարաւոր ֆրանքները զորս կը հաւաքէ մեծ մայրաքաղաքներուն մէջ, կը տանի կը թափէ Բարիզի իր թատրոնը — Դանաւտն տակառ մը — որ հիմայ հին Օրէնա Գոմիքն է, Շաթլէի հրապարակը, եւ որ դերասանուհիին անունը կը կրէ. ատենօք Ռընէսանսն էր Սառաի անձնական թատրոնը, թէեւ իր անունը չէր կրեր:

Վերջացնելով, ըսենք անմիջապէս թէ Սառա Պէռնար դարուս էն մեծ դէմքերէն մէկն է. ոչ մէկ դերասան կամ դերասանուհի, — ըլլայ հիններուն, ըլլայ նորերուն մէջ — իրեն հաւասար յուզած չէ ամբօխը, ո՛չ ալ իրեն չափ ազգեցութիւն ունեցած՝ ամեք.

նաբարձր չըջանականներու մէջ: Սառա Պէռ-
նար մինակ նշանաւոր դերերու աննման
ստեղծիլը չէ, այլ մանաւանդ հոյակապ անձ-
նաւորութիւն մը:

Մ. ՌԵՂՈՒՐԵԱՆ

Ն Շ Ա Ն Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

Հաճոյքով կը ծանուցանենք երկու նշա-
նախօսութիւններ որոնք կատարուեցան ըն-
տանեկան ծանօթ չըջանականներու մէջ, համակիր
չնորհաւորութեանց առարկայ դառնալով:

Բերա, Նուրեանց բնակարանին մէջ տեղի
ունեցաւ Վահան էֆ. Գնաճեանի նշանախօ-
սութիւնը Օր. Աննա Նուրեանի հետ: Գնաճ-
եան էֆ., երիտասարդ վաճառականը, հա-
մանուն առեւտրական Տան գործոն անդամ-
ներէն է, նոյնքան ծանօթ Պոլսոյ՝ որքան
Մանչեսթրի հրապարակին վրայ: Եւ Օր.
Աննա, դուստր հանգուցեալ Նուրեան էֆ.ի,
օժտուած է՝ իր անձնական ձիրքերուն հետ՝
խնամալ դատարարականութեամբ մը և ընկերա-
յին յատկութիւններով որոնք յատկանիշն են
հանգուցեալ պետական անձնաւորութեան
դաւկըններուն:

* * Նոյնպէս Բերա, Էվրէնեանց բնակա-
րանին մէջ, տեղի ունեցաւ նշանախօսու-
թիւնը Աստուածատուր էֆ. Հարենցի՝ Օր.
Արուսեակ Էվրէնեանի հետ, եղբոր դուստր՝
Հիւանդանոցի Հոգաբարձութեան բարեջան
անդամ և ծանօթ վաճառական Գրիգոր էֆ.
Էվրէնեանի: Հարենց էֆ., իր մօրեղբարց՝
Վսեմ. Ունճեան Տեարց առեւտրական հա-
տաւորութեան մէջ իր ունեցած դիրքէն զատ,
ծանօթ է նաև իր գեղարուեստական ճա-
շակներովը ու երաժշտական գրուածքներովը
որոնք ատեն ատեն երեւցած են մեր թեր-
թերուն մէջ, — ճաշակներ որոնց կը համա-
պատասխանէ իր խօսեցեալը՝ իր գեղարուես-
տական կարողութեամբը:

ՍՍՍՅԱՆՔ Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդա-
նոցի 1905ի Ընդարձակ Օրացոյցը, Մատ-
թէոսեան գեղեցիկ տպագրութեամբ և բազ-
մաթիւ պատկերներով որոնց մէջ կը գտնու-
ւի նաեւ թերթիս ողբացեալ հիմնադիր՝ բա-
րեյիշատակ Կ. Ս. Իւթիւճեանի պատկերը,

հարազատ նմանութեամբ: Ամբողջ գործը
ճոխ պարունակութիւն մը ունի և ինչպէս
միշտ՝ կ'արժէ որ ամէն Հայ հատ մը ունենայ
այդ Օրացոյցէն, որ ստուար հատոր մըն է:

* * Ն. Կ. Պէրպէրեան եւս հրատարակեց
1905ի իր Ժողովրդակա և Տարեցոյցը, շահե-
կան պէսպիսութիւններով ու օգտակար զի-
տելիքներով լեցուն: Զմբան երկար գիշեր-
ներուն համար՝ ախորժով կարդացուելիք
գիրք մըն է այս Տարեցոյցը որ իր կանոնա-
ւոր հրատարակութեամբը ընթերցողներու
ստուար թիւ մը կը գտնէ ամէն տարի:

ԳՐԱԿԱՆ ՆՈՒԷՐ

ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻԻ

Եթէ Անգլանքը, զոր յանձնարարեցինք
նախորդ թիւով, իբրեւ գրական նուէրի
յարմար հատորիկ մը, գոհացում կուտայ բա-
նաստեղծութեան ճաշակ ունեցողներուն մի-
այն, նորագոյն հրատարակութիւն մը՝ Սըմ-
բատ Դաւթեանի աշխատասիրած ՃԱՇԱԿ
ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆը լիովին կը գոհացնէ
արձակէ ու ոտանաւորէ միանգամայն ախոր-
ժողները: Այս ճոխ ու գեղեցիկ հատորը, ո-
րուն մէջ կ'երեւան մեր գրականութեան ա-
մէնէն ծանօթ ու սիրուած գրիչները, եկե-
ղեցական ու աշխարհական, ամէնէն կատա-
րելագործուած ու խնամուած հաւաքածոն է՝
մինչեւ ցարդ հրատարակուածներուն մէջէն՝
և գերազանցապէս յարմար կազանդի առթիւ
իբրեւ գրական նուէր արուելու: Մեր բոլոր
ծանօթ հեղինակները, գրագէտ, բանաս-
տեղծ, հրապարակագիր, ինքնուրոյն զըր-
ուածքներով կ'երեւան այս նոր ՃԱՇԱԿին
մէջ: Գինն ալ շատ դիւրամատչելի է. —
Պարզ կաղմուածինը՝ 7 զրշ., ոսկեզօծինը՝
10 զրշ.: — Վաճառման կեդրոնատեղին,
Դաւթեան Գործակալութեան գրասենեակը,
Պոլիս, Սիրքէճի, Սօրասանճեան խան: —
Դաւառներէն արուելիք յանձնարարութիւնք
փութացուելու են, տարեգլխին գիրքերը
հասցուելու համար:

Հիմնադիր — Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
Skr եւ Sğorke — ՏՈՒԹ. ԵՂՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ Օրագրի

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ԶԱՐԵՂ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ—ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Վ. ԿԱՅԵԱՆ

ԼԻՕՆԻ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ

ԵՒ

ՊԱՇԵՆԷ ԺՐՆԷՎԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ

Փախադրած է իր Դարձանասանը Կլա
վանի փողոցէն՝ Բերայի Շրտակ ճամբուն
վրայ։ Պէտքը — Բարձրագոյն փողոց,
թիւ 2 տունը ուր հիւանդ կրնդունի ամէն օր։
Կը բուժէ ակռայի ամէն տեսակ թաւեր
եւ լինտերու հիւանդութիւններ, կտաթերա
գործեալ սիսթէմներով։

Երեքշաբթի եւ Ուրբաթ օրերը մինչեւ
ցորեկ աղքատաց ակռայ քաշելը ձրի է։

4—20

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիսին դմ

Գ. Ե. Շ. օրերը առաւօտեան կանու-

խէն մինչեւ իրիկուան ժ. 11½

Բ. Գ. Ուր. օրերը 6եմ մինչեւ 11½

Կիրակի օրերը ժամադրութեամբ 2—10

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՈԶԷ

Հանրածանօթ մանուկապա եւ կնիս-
տաբան (gynécologue), Տօքթէօր Էմիլզէ
օր 15 տարուան գործունէութեամբ մեծ
համբաւ ստացած է, կը ծանուցանէ յար-
գայ յաճախորդներուն թէ բնակարանը
փոխադրած է Պէքետր փողոց թիւ 18.
Բայ ի վերայիշեալ իւր մասնագիտութենէ
կը բուժէ նաեւ նորագոյն մէթոտներով
ջղային եւ հագեկան աւ երեւակայական
ամէն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս
նէվրաթթէնի եւ tic անուանուած ալքի
երեսի եւ սւսերու ագեղ եւ ալամայ
լափաւմները եւ դաշտանի դադարումէ
տառջ եկած ջղային խռովումները եւ
'րիտասարդական մալիքները, ինչպէս
նաեւ գինեմալիքը, մօրիֆնամալիքը եւայլն,
Կիրականութեն զատ ամէն օր կէսօրէն
սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կըն-
դունի, եւ ուրբաթ օրերը ձրիաբար կը
դարձանէ վկայեալ աղքատները։ 4—20.

ՌՕՍԻԱ—ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՂ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾԻ



1881 մարտ 20ի Կայս. Ուրաղով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը։

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի
ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՂԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ-
ՆԵՐՈՒԹԻՒՆ, ԿԵԱՆՔ ապահովագրութիւն ՇՈՐԵԿԱՌԻՈՎ ԵՒ ՇՈՐԵՆԱՌԻՈՎ ՈՒՂԵՒՈ-
ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կոտ-
րուելուն դէմ։

Ընկերութեան զրամագրուիւր, ամբողջապէս վճարուած

10,666,667 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

142,585,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա-
գլուխ եւ փնասուց հատուցում


314,768,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տուրոս

56,585,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Աղաբեան
խան, Վոյվոտա, Ղալաթիա,

10—10



ԴԵՂԱՐԱՆ

ԽԱՉԻԿ ՖԷՍՃԵԱՆ

Կ. Փօլիս, Մահմուտ փաշա Պաշի, Ապուտ ԷՖ.ի խանին դէմ 261

Դեղարանն նկատելով որ՝ Պօլսոյ կարեւոր եւ կեդրոն մէկ տեղը գտնուելուն առթիւ, Մօրինարի ձկան իւղի մասին եղած խնդրանքները հետզհետէ շատցած են, այս խնդրանքին եւ ի մասնաւորի Ազնիւ յաճախորդաց գահացում մը առաւ եւ փոքր ինչ ծառայութիւն մը մատուցանելու համար, սեբիս եմ այս ահպամ յատարարելու թէ՛ մասնաւոր յանձնարարութեան մը համաձայն բերել տուած ըլլալով Բէթէր-ՄՕԼԼԷՐԻ Մօրինարի ձկան իւղին առաջին տեսակը. ԱԻԱՆՅ ՀՈՏԻ, կը ծախուի Դեղարանն՝ թէ մասնաւոր շիշերու մէջ եւ թէ քաշով. ամէնէն փափկակողմ օտամօքսի համար իսկ խիստ ախտօթելի ըլլալով. թէ մեծերու եւ թէ՛ տկարակողմ պզտիկ աղայոց, Ուստի ամէն առնալ՝ որոնք կը փափաքին խմել թէ աժան եւ թէ առանց հոտի զօւտ եւ անխառնալիս ձկան իւղ, թող հոճին դիմել դեղարանն, գէթ մէկ անգամուան փորձով մը ստուգելու մեր խօսքերուն ճշտութիւնը:

Սոյն բաղամանայ դեղարանը, այս ահպամ նոր կազմակերպութենէ մը ետքը. Ուստի Ծէսճեանի կողմանէ, յիշատակուած մէջ պատիւը ունեցաւ գնահատուիլ որոշոյ հասարակութեան, որմէ քաջաբերելով պէտքը կը դադարէ իրեն աղղութիւնը եւ նպատակը երկայնացնել հա՛րութեան:

ՆՊԱՏԱԿ. — Դո՛ւ ձգել իր յաճախորդները միշտ՝ դեղերու թարմութեամբ եւ արուեստին խղճամբ գործադրութեամբ:

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ. — Մաքրութիւն, ապաւելիման դրութիւն եւ պարկեշտութիւն դեղարանին սկզբունք եղած են:

Եւրօպական տան մը հետ բանակցած ըլլալով՝ ամէն շաբթու պատուաւոր թարմ քիւպեր (աւր գալիսի) կը հասնին բօսդաշով:

Ամէն օր Դեղարանն յաճախող Հայ եւ օտարազգի բժիշկներէն յիշենք մասնաւորաբար հանրածանօթ Բժիշկ ԱԼԼԱՀՎԷՐՏԻ ԷՖ.՝ որ ամէն Գշ. Եշ. Շբ. օրեր ժամը 8—11 իրեն դիմող հիւանդները կը դարմանէ իրեն ծանօթ փորձառութեամբ եւ մասնագիտութեամբ. դեղարանին մասնաւոր դարմանասրահը, Դեղարանը ունի նաեւ ԳԻՇԵՐԱՅԻՆ ՍՊԱՍ՝ 6 - 10

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՑ ԱՊԱՀՈՎՂՂՐՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲՍՐԻՉ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ չեացք	274,000,000	Քր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ գրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Ց Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ չեացք	129,000,000	Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գիւնեով: Նպաստաւոր պայպաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան մայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսաբարութիւններէն, որոնց կենթարկ ուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation of es' bënëfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ գրութեամբ գործող ընկերութեանց կ'ապաւնովագրուին:

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի ՏՅՈՐԷՆՈՒՍԻՈՆ

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաւ Բաքըրնը Օղլու

Մասնաձիւղ՝ Ղալաթիա, Ինայէթ Խան: Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

10—10

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հեղեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԻՍ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ.

ԳՈՒԲՍ ԼՈՒԻ ՏԵՊԱՎԻԴՈ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հեղեհի եւ ծովային արկածներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւն կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամատւութունն է Ի Կ. Պոլիս, Քոնսթ Լիօնէ

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52—53—54—55—56

1—10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հ Է Ր Ճ Ա Յ Ի



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԵԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Գոհարեղեմներու, ամեն Տեսակ կահ կարասիներու եւ ամենն ևնրան
հազուսներու, եւլն.

Պատիւ ունինք ծանուցանել պատուարժան հասարակութեան թէ՛ մեր վաճառատնաց
ապրանքներուն տեսակները աւելի ճոխացնելու ու մեր յաջելի լաճախողաց աւելի գո-
հացում ապրու նպատակու, ՈՍԿԵՐԶՈՒԹԱՆ վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներէ
զատ կրնորու եւ տրեբու համար եւ մեծ ու փոքր ամէն տարիքի յատուկ ԶԳԵՍՏԵՂԵՆ.
ՆԵՐՈՒ՛, ճերմակեղէններու եւ (թօնաֆիէ) ու միտնգամայն ամէն տեսակ առաջնակարգ
ԿԱՐԱՍԻՆԵՐՈՒ (ձեղունի լամպներ, օֆիսէներ եւ այլն.) ճոխ մթերանց մը հաստատած
ենք. խիստ դիւրամատչելի գիներով. եւ կանխիկ ու ապառիկ պայմաններով.
Այդ՝ կը հրաւիրենք մեր համակրելի լաճախորդները, որ հաճին դիմել վերաբիշեալ վա-
ճառատները, օւրիկէ անտաքակոյս անհաւն գոհունակութեամբ պիտի մեկնին:

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւրին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հարիւրին
5 չաբթական վճարմամբ:
2. Կանխիկ գնողներու համար հարիւրէն 5 զեղն:
3. Կանխիկ ծախում ապրանքներէն միմայն ադամանդեալ, գոհարեղէններ երբ գոր-
ծածուած բայց ա՛յլուս մնացած ըլլալ հարիւրին 10 զեղնով եւ կառնուին: Իսկ ապա-
ռիկ ծախում եւ ա՛յլուս մնացած միմայն ադամանդեալ, գոհարեղէններն ալ հարիւրին
15 զեղնով եւ կառնուին:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

3. Գ. Նարաճակոտ վճարմանց համար հաւաքիչներ ընդմիշտ պատրաստ են:

ՄԵՇ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶԱՅ ՓՈՂՈՅ, ԹԻՒ 13 Կ. ՊՈԼԻՍ

ՑԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻՔԹՈՐԻԱ ՏՇ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ
ունի կեանքի, օժիտի, արկածի, ցմահ թռակի նիւղեր

VICTORIA ՎԻՔԹՈՐԻԱ ՏՇ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛
ԲՇԿԱԿԱՆ քննութեամբ եւ թէ՛ առանց բՇԿԱԿԱՆ քննութեան
DE Առանց բՇԿԱԿԱՆ քննութեան եղած կեանքի ապահովագրութիւնն-
BERLIN րուն վճարումները չաբթական մասնավճարներով տեղի կունենան,

սկսեալ 5 զրուչէն

Ապահովագրեալ գումար 1902ին Ֆր. 1,244,457,577

Պահեստի դրամ 1902ին » 451,284,214

Հաստատւած 1853 սեպտ. 20ին ար- ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ
Բայապանհրովարակով եւ ուղղակի օսմ. Գայս Պանքա
կառավարութեան հսկողութեան ներ- եւ Քրետի Լիոնէ

Եւ:

Տեսուչ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԵԶԵՃԵԱՆ

Լիազօր Ընդհ. Ներկայացուցիչ
ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԴԱԼՖԱՅԵԱՆ
Պոլիս Քաթըրնքօղլու խան

թիւ 45 եւ 45 Բ. 10-10